

ԾԱՂԻԿ ԿԵ ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՕՐԵՐԸ: — Հա-
տը 40 փարա:

Բաժանորդագրին ԿԱՆԻՍԻԿ — Պոլսոյ Համար տարե-
կան 45 դրշ: վեցամսեայ 23 դրշ: եռամսեայ 12 դրշ: —
Գաւառաց Համար տարեկան 30 դրշ: վեցամսեայ 26
դրշ: եռամսեայ 14 դրշ:

Ուստիոյ Համար տարեկան հինգ րուբլի: Ուրիշ եր-
կիրներու Համար 12 ֆրանք:

Գաւառներէն դրոշմաթուղթ կ'ընդունուի:
Միայն երեք թիւ ապագիկ կը զրկուի: Այնուհետեւ
բաժանորդագրին չը վճարողը կը գաղթի թերթ ընդու-
նելէ:

Ծանուցման տողը 2 դրշ:

40 փարա

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 փարա

ԾԱՂԻԿ

Լ Ր Ա Պ Ի Ր

ԾԱՂԻԿԻ ՎԵՐԱԲԵՐԵԿԱԼ ԱՄԷՆ ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐ ԱԿՏՈՐ Է
ԳԻՒԿԸ,

Առ ՏԵՐԵՐԵՆ-ՀՐԱՄԱՐԱԿԻՆ 3ՈՎԵՆԱՆ Գ. ՓԱՆԱԳԱՇԵԱՆ

Պօլսոյ, Էսկի-Չապթիէ, Պէրպէրեան Տպարան

درعیله ده اسکی ضبطیه زقاعنده بربریان مطبعه سنده

بالا قشيان حوونان

HOVNAN PALACACHIAN

Rue Esski-Zabtié, Imprimerie N. Bérbérian
CONSTANTINOPLE

ՆՈՐ ԵՐԶԱՆ — ԹԻՒ 3

ՇԱԲԱԹ

27 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1890

ԵՂԵՆԱԴԱՏ ԱՏԵԱՆ

Չորեքշաբթի առուր Թուրք լրագրից Հրատարակե-
ցին Եղեռնադատ ատենի հետեւեալ պաշտօնագիրը:

Ի Պէշտիլեքտէրէ գինետան մը մէջ մէկ քա-
նի մարդեր ձերբակալուած էին՝ որոց վրայ
գտնուած էր հինգ զրուշնոց տոմսակներ, վը-
րան երկու մերկ ըմբիշներ նկարուած, և
հասկցուած ըլլալով որ Հայաստան կազմակեր-
պելու երեւակայական գաղափարն իրագոր-
ծելու համար կազմուած և այլ և այլ խռո-
վայոյզ ընթացից ձեռնարկող խռովարարաց
խումբի անդամներէն են, ամբաստանուած
էին:

Արդ, այդ անձերէ խոհարար Համբարձում,
միջահասակ, ծաւի աչերով, գիրուկ, խար-
տեաշ և սպիտակաթաւն պեխերով, միջին և
կլոր քիթով, կլոր դէմքով, ցորենագոյն և
սեւ յօնքերով ու մազերով, փախած և ցարդ
բռնուած չէ: Ըստ տրամադրութեան Պատ-
ժական Դատաւարութեան Օրինաց 371^{րդ} յօ-
դուածին, գատարանին նախագահին կողմէ
վերայիշեալ Համբարձումի՝ սոյն պաշտօնագրոյ
թուականէն սկսեալ տասն օր պայմանաժամ
կը տրուի, որպէս զի օրինաց հնազանդելով
դատարանին ներկայանայ: Հակառակ պարա-
գային միջանձնազանդ նկատուելով, ի բացա-
կայութեան պիտի դատուի և քաղաքական
իրաւունքներէ զրկուի և իւր ստացուածքն
գրաւի պիտի երթարկուի: Համբարձում յե-
տոյ որ և է ըողոքի իրաւունք չպիտի ունե-
նայ:

Կը ծանուցուի նաեւ թէ սորա գտնուած
տեղը գիտցողները պարտաւոր են խնայ տալ
և դատական ու ստիկական կան ըրտր պաշ-
տօնեայք ևս պարտաւոր են ձերբակալել զնա:

— Եղեռնադատ ատենին երեքշաբթի օր
դատեց Կիւլլէնիկեան Դատարար անուն անձն,
որ ի վառնա գտնուած պահուն վնասակար
խօսքեր ըրած ու թշնամական ընթացից մէջ
գտնուած և գրասենեկին մէջ եւս վնասակար
թուղթեր գտնուած լինելուն համար իրրեւ
ոճրագործ ամբաստանուած էր:

Դատարանը, յետ դատաւարութեան՝ նկա-
տելով որ Գառապար Կիւլլէնիկեանի ընթացքը
կը պատշաճի Պատժական Օրինաց 66^{րդ} յօդու-
ածին, ցկեանս աքսորման դատապարտեց զնա:

ՆԱՄԱԿ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Հրատարակուեցաւ արդէն ի լրագիրս Մար-
տիրոյ հոգեւոր հովիւ Արթ. Տէր Սահակ Իւ-
թիւճեան Հօր հրաժարումը և նորա յաջոր-
դին մեկնումն մայրաքաղաքէս յիւր պաշտօ-
նատեղին: Ազգ. Պատրիարքարանը խնդիր ը-
րած լինելով Արթ. Տէր Սահակ Հօր ի Փարիզ
մեկնումն իւր ընտանեաց մօտ, կուգամ այս

առթիւ հարյուր մ'ուղղել առ որ անկ է,
դատել և վճարել հասարակաց դատաստա-
նին յանձնելով:

Արթ. Տէր Սահակ Հօր պաշտօնավարու-
թեան բարեք և արդիւնաւոր ընթացքն ու-
րանալ կարելի չ'է: Ի Մարտիրոս հայկական
մատրան մը հաստատման նախաձեռնութիւնն
ու պատիւն իրեն կը վերաբերին: 1881 թը-
ուականէն ի վեր կը վարէր այդ քաղաքի ա-
ռաջնորդութեան յոյժ փափուկ պաշտօն, և
այդ ինն երկար տարիներու միջոցին, հեռի
գանդատանաց տեղի տալէ, հեզահամայր
բնաւորութեամբ, կրօնական կարգապահու-
թեամբ և ընտանեկան օրինակելի կենօք, ջերմ
գոհունակութեան և խնդակցութեան արժա-
նացաւ միշտ, որպէս կը վկայեն Հայ գաղ-
թականութիւնը ի Մարտիրոս և ի Փարիզ,
ինչպէս նաև մեր Ազգ. Պատրիարքարանն:

Արթ. Տէր Սահակ Հայր բանիւրուն և ուս-
եալ քահանայ մ'է. համալսարանական չէ,
ստոյգ է, սակայն հմուտ է այնքան որքան
պէտք էր իւր պաշտօնին, որու պատիւ բե-
րաւ միայն, մանաւանդ զի, յառաջդիմասէր
անձ, այդ ինն տարւոյ միջոցին մեծապէս
զարգացեալ է և իւր խորախորին հմուտի մը
բաղդատմամբ ունեցած թերութիւնները լի-
ուր կը լեցնէ լրջութեամբ և խոհականու-
թեամբ, բարեմասնութիւնը որք կարի գնա-
հատելի են նմանօրինակ փափուկ պաշտօնե-
րու համար:

Արթ. Տէր Սահակ Հայր պատիւ բերաւ
Մարտիրոս Հայ գաղթականութեան մասնա-
ւորապէս և համայն Հայ ազգին ընդհանրա-
պէս՝ հասցնելով անզուգական զաւակ մը,
Տոքթ. երուանդ Արշակունի Իւթիւճեան՝ որ
գեւա ուսանող կ'արժանանար Օսմ. Կառավա-
րութեան մէկ պատուանշանին և Ֆրանսական
Կառավարութեան մէկ պատուարեր չքաղը-
րամին: անցեալ տարի ստացաւ, գեւ յոյժ ե-
րիտասարդ, իւր բժշկական առաջնակարգ վը-
կայագիրն և անմիջապէս հաստատուեցաւ ի
Գահիրէ ուր օտարազգի ընտիր բժշկաց մէջ
խի ընտրելագոյն հանդիսացած է ի փառս
իւր ընտանեաց և իւր Ազգին:

Հոն ուր առաջնորդ ունեցած եմք, վաղ
կամ կամ անագան թեր ու դէմ կուսակցու-
թիւնը կազմուած են առաջնորդի շուրջ. նոյնն
եղած լինելով ի Մարտիրոս, Տէր Սահակ Հայր
կը պարտաւորի փութացնել իւր հրաժարա-
կանը՝ մեկնելով ի Փարիզ իւր ընտանեաց
մօտ, յետ իննամեայ բարեք պաշտօնավա-
րութեան: Ազգ. Պատրիարքարանը ո'չ միայն
կը փութայ յաջորդը կարգելու, այլ և կ'սկսի
վարուիլ Արթ. Տէր Սահակ Հօր հետ իրրեւ
յանցաւորի հետ: Արդ, կ'ուզէինք հրապա-
րակաւ հարցնել Ծաղիկի միջոցաւ՝ թէ՛ ար-
դարութիւն է՞ այսպէս թշնամանօք վարուիլ
մեր եկեղեցւոյ այնքան արդիւնաւոր և այն-
քան պատուաբեր մէկ անդամին հետ. ան-

խղճութիւն չ'է՞ փոխանակ իւր իննամեայ
անստգիւտ պաշտօնավարութեան համար շնոր-
հակալութիւն մատուցանելու, հաւածել զինք
մինչ իւր հանգստեան մէջ և իւր ի Փարիզ
մեկուսացման այլ ընդ այլոյ և թիւր մեկնու-
թիւններ տալ:

Հասարակաց կարծիքն, որու հարկ է դի-
մել նմանօրինակ պարագայից մէջ, պիտի
գիտնայ անշուշտ անաչառապէս դատել:

Հ Ո Ւ Ն Կ

ԺԱՌԱՆԳՈՒԿԱՆ ԽՆԴԻՐ

Պարում 8/20, Հոկտեմբեր 1890

Տէր Խմբագրապետ,

Ընթերցայ Ձեր «Ծաղիկ» Պատուական շա-
բաթաթերթի առաջին թուոյն մէջ այն տե-
ղեկութիւնը որ կը պատկանէր Հնդկաստան
վախճանեալ Մասեհ Բաքաշան Մարտիրոսեանի
կտակին, որուն իրրեւ ժառանգորդը կը ներ-
կայանայ այժմ Գառնանց Օլիկեան Պ. Կարա-
պետ անուն անձն՝ ի ձեռին ունենալով Մար-
գուանու Կառավարութեան կողմանէ հաս-
տատեալ ճիւղահամար մը: Այս ժառանգա-
կան ամենակարեւոր խնդրոյ մասին թուակա-
նէս իրր տասն տարի յառաջ Պօլսեցի մի ան-
ձի խնդրանօք Հնդկաստան գրելով, պէտք
եղած տեղեկութիւններն ստացայ. ինչպէս
հանգուցելոյն 1794 թուոյն իւր առողջութեան
միջոցին պատրաստեալ հետաքրքրական կտա-
կին տպեալ պատճէնն և նորա Տապանագիրն⁽¹⁾.
սակայն այն միջոցին ինչ ինչ պատճառներով
չը կարողացայ կտակի պատճէնն իրեն յանձ-
նել:

Ուստի, Տէր խմբագրապետ, Պ. Կարապետ
Գառնանց եթէ կ'ուզէ սոյն ժառանգութեան
մասին ճշգրիտ տեղեկութիւն ունենալ, կամ
ի ձեռին ունենալ տպեալ կտակի պատճէնն,
յորում ամէն խնդիր և հաստատութեան ձեւն
խիտ պարզօրէն բացատրուած են, կարող է
ուղղակի, կամ Ձեր պատուական «Ծաղիկ»-ի
միջոցաւ թղթակցել ինձ հետ:

Այսու. աղբարարութեամբ, խնդրեմ, Տէր
Խմբագրապետ, հաճեցէք ընդունիլ իմ յար-
գանքներս:

Մ. ՍԱԼՃԵԱՆ

(1) Հաճեցէ՛ք թէ՛ կտակի և թէ՛ տապանագրոյն պատ-
ճէններն յուղարկել «Ծաղիկ»-ի խմբագրութեան: Մ. Ս.

Ա.Զ.Գ. «ԾԱՂԻԿ» Ի

«Ծաղիկ»-ի 2^{րդ} թիւն սպառած լինելով, կը
խնդրուի մեր այն ընթերցողներէն որոնք հա-
ւաքածոյ կազմելու սովորութիւն չ'ունին,
մեզ վերադարձնեն այդ թիւը և փոխարէն
ստանան նոր թիւ մը: Նոյնպէս կը խնդրեմք
մեր յարգելի գործակալներէն՝ մեզ վերա-
դարձնել իրենց քով աւելցած թիւերը, մա-
նաւանդ 2^{րդ} թիւէն:

ՎԱՆԵՑԻ ՊԱՆՏԱՍԱՐԻ ԴԱՏԸ

Նիս Ա.

Եղեռնադատ ատենին առջեւ երկուշաբթի օր տեղի ունեցաւ դատաստանն օսմանեան հալատակ 32 տարեկան Վանեցի Պաղտասար Սարգսեանի, անդամ այն եղեռնական խումբին՝ որ նպատակ ունի շայտտան մը կազմակերպելու երեւակայական գաղափարն իրադրութեւն, Հայ հասարակութիւնը կայս. կառավարութեան դէմ գրգռելու, և իրեն չհամակերպողներն սպաննելու:

Գատարանին կը նախագահէր Վասըֆ Էֆ. Անդամը՝ Էմին պէյ, Նիքոլաքի Էֆ. և օգնական անդամ Մոստիճեան Յարութիւն Էֆ. Ընդհ. դատախազի օգնական վրայ բազմած էր օգնական Մէմուհէ պէյ, Փոխանորդ ամբաստեղն՝ Ժամատարան Գրիգոր Էֆ. Գալայճեան:

Այս Պաղտասար ամբաստանուած է թէ, օգոստոսի 30^{րդ} օրը կեդրոնական բանտը գնացած լինելով տեսնելու իւր եղբայրը Համի Աւետիսն՝ որ կեղծ հէվալէներու խնդրոյ մ'առնելու բանտարկուած էր, բանտէն ներս մտած պահուն, իւր վրայ գտնուած թուղթերն և այլն ըստ սովորութեան դռնապանին կը յանձնէ: Այդ թուղթոց մէջ հայերէն գրութիւն մը տեսնուելով, դռնապանը կ'ուզէ բանտի տնօրէնին ցոյց տալ, սակայն Պաղտասար այդ թուղթը ոչնչացնելու համար բերանը կը նետէ: Տնօրէնին ներկայութեան թուղթը բերնէն հանուելով և հարցաքննուելով, խնդիրը երեւան կ'ենէ: Պաղտասար կ'առարկէ թէ այդ թուղթ իւր սիրուհւոյն կողմէ զրկուած նամակ մը լինելուն համար չէր ուզած որ ձեռք անցնի: Պաղտասար այդ թուղթը չափէն աւելի ծամած լինելով, կտոր կտոր բերնէն կը հանուի և ոստիկանութիւնը կտորները միացնելով ուրիշ թուղթի մը վրայ կը փակցընէ: Այդ թուղթ թարգմանուելով, կը տեսնուի որ «Մ. Մուրատեան» ստորագրութիւնը կը կրէ և թուականն է 28 օգոստոս 1306. Իսկ պարունակութիւնն է հետեւեալը.

«Սիրելի կայծիկս Վարդգէս տեղիւն փախաւ. բնաւ միաքէն անցած չէ թէ իւր ընկերաց կողմէ ձեռք կը արուի, որովհետեւ կարելի չէ կասկածիլ ձեզ հետ եղած բանակցութենէն: Եթէ յանձնարարուելու համար մարդ գտնուի, ուղղակի Վարդանին յանձնեցէք: Այդ առաջնորդներով մեր գործին ընթացքը լաւ է: Այս ալ իւր բաժինն ընդունեց, սակայն մեզը որ չկրցաւ իւր բոլոր պահանջներն առնուլ, Հարկաւ ուշ կամ կանուխ մեր պարտքը կը կատարենք. վտանգի մէջ չենք. ապահովութեան մէջ ենք:»

Այս գրութեան մէջ գործածուած է նաեւ Յուդայ բառն իրրեւ հումանիշ մատնիչ բառին: Գրուածքէն և գէպերէն հաստատուած է թէ այս Յուդան է Տաճատ վարդապետ, որ օգոստոս 28 ին կէտիկ Բաշայի եկեղեցւոյն մէջ վիրաւորուած էր սպաննուելու նպատակաւ և սակայն չէր մեռած:

Պաղտասարի տունն խուզարկուելով, գտնուած են գրութիւններ որ կը պարունակեն «Հայաստան»ի և «Վարդան»ի երեւակայական անուանց համար գովեստներ, «Հայոց սպարապետ կարգուելով, սպայներն ի զէն կը կոչէ» խօսքն և այդ կարգի վնասակար խօսքեր: Հարցաքննիչ դատաւորին առջեւ Պաղտասար հարցաքննուելով, ըսած է թէ իւր գոված այդ Վարդանը հազար տարի առաջ Հայոց թագաւորն էր: Նոյնպէս գտնուած է ի Դա-

մանկոս աքսորեալ Պողոս Նաթանեան անուն խուզարարի մը նամակն, որով կ'ըսէ թէ Դամանկոսի մէջ թէ 60 տնւորի չափ Հայեր կան, սակայն առջին ալ անգգայ և անպիտան մարդեր են:

Այդ գրութեանց մէջ նշանակեալ Վարդգէստին, Վարդանին և ստորագրութեան տէրերուն ո՞րոնք լինեն Պաղտասարին հարցընում, և սակայն նա յայտնած չը լինելով, Հարցաքննիչ դատաւորը, Ընդհ. դատախազի օգնականը և Ամբաստանիչ ատենը համոզում գոյացուցած են թէ, այդ նամակը գրող անձը, ինչպէս և Պաղտասար, անդամ են վերոյիշեալ եղեռնական խումբին:

Վերոյիշեալ տեղեկութիւնները պարունակող Ամբաստանիչ ատենի տեղեկագրոյն ընթերցումէն յետոյ, կարգացուեցաւ նաև ընդհանուր դատախազի ամբաստանադիրն: Ապա Նախագահն սկսաւ հարցաքննել ամբաստանեալ Պաղտասարը:

Նախագահ. — Բանտ մտած ժամանակդ բերանդ նետած նամակդ ո՞րիչ առիւր: Պաղտասար. Աղջկան մը նամակն է: Նախ. Ի՞նչպէս աղջիկ, կարգուած չ'ես: Պաղ. Ոչ: Նախ. Այդ աղջիկն ո՞ր է հիմա: Պաղ. Պոլիս է: Նախ. Ի՞նչ գրուած է նամակին մէջ: Պաղ. Մեր մէջ գաղտնիք մ'ունիւք, անոր վրայ գրած էր: Նախ. Ի՞նչ գրած էր: Պաղ. Նամակը լաւ բացատրուած չէ. մեր երկուքին մէջ եղած գաղտնիք մ'է, սիրահարական խնդիր: Նախ. Քանի որ վրնասակար թուղթ մը չ'էր, ի՞նչու բերանդ նետուելով ջնջել ուղեցիր: Պաղ. Որպէս զի այդ գաղտնիքը չը յայտնուի. եթէ յայտնուի՝ աղջկան պատիւը կ'աղարտի: Եթէ այդ թուղթը բանտի տնօրէն յանձնէի, նա պաշտօնեայ է, բացատրութիւն պիտի պահանջէր, և ալ տալու պիտի պարտաւորէի. պղտիկ բանէ մը մեծ գործեր կը բացուին, խնդիրը ոստիկանութեան կը յանձնուի, աղջկան պատիւը վրտանդի կ'ենթարկուի և գործը անյաջողութեան կը դատապարտուի: Նախ. Բայց նամակին մէջ սիրահարական խօսքեր չ'կան: Պաղ. Չկան, որովհետեւ գործը կարգին է, իրականութեան ճամբուն մէջ մտած է, այլ ևս հարկ չ'է մնացած զքեզ կը սիրեմ, և այլն, գրելու: Նախ. Ուրիշ երկու հոգւոյ անուն եւս կայ, ասոնք ո՞վ են: Պաղ. Մեր գործիք ըրած անձերն են: Նախ. Ո՞ր են այժմ: Պաղ. Անոնք ալ Պոլսոյ մէջ են: Նախ. Ասոնց ո՞վ լինեն հարցուեր է, չ'ես ըսած. ի՞նչու համար: Պաղ. Որովհետեւ եթէ ըսեմ, ամէն բան կը յայտնուի, աղջկան ալ գործը կը վերջանայ: Նախ. Ի՞նչու չ'ես ըսեր, աղջկան գործը ի՞նչու պիտի վերջանայ: Պաղ. Ասոնք անձնական իրաւանցս վերաբերեալ բաներ են. հասարակաց իրաւանց հետ վերաբերութիւն չունենալուն համար չ'եմ ըսեր:

Նախ. Նաթանեան անուն վարդապետի մը նամակն ալ կայ եղեր. այս ի՞նչ է: Պաղ. Նամակը ձեր քովն է. սխալ թարգմանուած է, թո՛ղ նորէն թարգմանուի: Նախ. Շատ լաւ, դուն ուղիղն ըսէ, մտիկ ընենք: Պաղ. Նաթանեան տակաւին Շամ չը գացած, իրմէն խնդրեցի որ այնտեղ ինձ գործ մը գտնէ: Եթէ հոն վաճառականներ կան, յանձնակատար կ'ըլլամ, կ'երթամ կուգամ, ըսած էի: Նախ. Մինակ ասոնք չ'են, ուրիշ խօսքեր ալ կան, «Վաթսուն տուն Հայ, և ըն...»: Պաղ. Այո՛, պէտք է լեզու գիտնաս, կ'ըսէ. լաւ ժամանակ անցնելը կը յայտնէ և եթէ,

կ'ըսէ, թագաւորը ամսական մը կապէ, պիտի կրնամ հանգիստ ապրիլ. նախ իմ գործիս վրայ գրած է, յետոյ իւր վիճակը հասկցուցած է, վերջը դարձեալ իմ գործիս դառնալով, «60-70 տուն Հայեր կան թէ և, բայց անօգուտ են, այսինքն քեզ չ'են կրնար օգնել» ըսել ուզած է: Նախ. Անգգայ են, ըսած է: Պաղ. Անօգուտ և անգգայ միևնոյն բաներն են. ինք եկեղեցական ըլլալով, աշխարհականներէն դրամ առնելով կ'ապրի. քիչ դրամ կուտան եղեր, անոր համար անգգայ են կ'ըսէ, իր ցաւը կուլայ. այս խօսքերը ինձ չեն վերաբերիր: Նախ. Դրամական օգնութիւն չ'են ըներ, ըսած է: Պաղ. Այո՛, ինձ օգնութիւն չ'են ըներ, բնականաբար քեզ ալ չը պիտի ըներ, ըսել ուզած է: Նախ. Վարդապետ և Վարդան ո՞վ են: Պաղ. Չեմ գիտեր: Նախ. Նախ չ'եմ գիտեր ըսեր ես, յետոյ ըսեր ես: Պաղ. Այդ անունները ջնջուած ըլլալով, չեմ գիտեր ըսի. վերջը բնագիրը տեսնելով գիտցածս ըսի. այս անուններէն տէրութեան և ազգին վնաս չը հասնիր:

Նախ. Վարդանը սպարապետ եղեր է, և ըն, գրուած է: Պաղ. Վարդանի մասին բացատրութիւն տամ: Ինչպէս հարցաքննութեան մէջ ալ ըսի, Վարդան սուրբ մ'է, Հայոց թագաւոր չ'է. 1500 տարի առաջ Պարսից և Հայոց մէջ տեղի ունեցած պատերազմին առթիւ երգ մ'ալ կայ Վարդանի վրայ չ'իմուած. Պարսից գրգռուած մէջ ալ գրուած կայ. երգը Պարսից դէմ է և մեր եկեղեցւոյ մէջ ալ կը կարգացուի. տետրակիս մէկ ուրիշ երեսն ալ թագաւորին համար չ'իմուած երգեր կան. եթէ տէրութեան դէմ չ'իմուած խօսք մ'ըլլար, այսպէս դէմ առ դէմ կը գերուէր: Ենթադրենք որ վնասակար ալ ըլլան, ո՛չ տետրակը իմա է, ոչ մէջի գիրը. 15 տարի առաջ մեր տունը մարդ մը մեռած էր. ունեցածը չ'ունեցածը աճուրդի հանեցին մեր տան մէջ. արժէք չ'ունեցող բաներուն հետ այս տետրակն ալ մնացեր է. ես ալ գոտայ առիւ. վնասակար ալ չ'է. եթէ վնասակար ըլլար, կը պատէի կը նետէի:

Նախ. Նաթանեանը քու ի՞նչք է: Պաղ. Հօրեղբորորդի կը համարուինք: Նախ. Ըսել է որ յարաբերութիւն ունինք: Պաղ. Յարաբերութիւն ունինք. սա ալ ըսեմ որ Նաթանեանին գործին նայել կ'ուզէի, սակայն խենդ ըլլալուն համար քանի մ'անգամ հետը կ'ուր ըրի. մինչև իսկ ամէն Հայ անոր համար խենդ է կ'ըսէ. եղբորս գործին համար ալ ան պատճառ եղաւ որ բանտ գացի և հետը տեսակցութիւնն կարելի չ'եղաւ ինձ:

Մէմուհի պէյ. — Մէկ մ'ալ երուանդ ստորագրութեամբ նամակ մը գտնուեր է. այս ի՞նչ է:

Նախ. Այդ նամակն ի՞նչ է: Պաղ. Հօրը գրուած նամակ մը, ինձ չ'է գրուած. այդ նամակին մէջ Պոլսէն մեկնելուն վրայ գրած է. գրողը 16-17 տարու տղայ մ'է. լրագրաց մէջ կարգացած ըլլալու է որ իւր նամակին վերջը քաղաքականութենէն և Գումգաբուրի Հայոց եկեղեցւոյն մէջ տեղի ունեցած դէպքէն տեղեկութիւն ուզած է:

Մէմուհի պէյ. — Անդամ մը կարգացուի: Այս միջոցին քարտուղարը դրաւեալ թուղթերն անգամ մ'եւս խառնելով, նամակ մ'ալ գտաւ և Նախագահին ներկայացուց: Նամակները քննուելով, նախագահը՝ բանտին դուռը Պաղտասարին բերանը նետած և կտոր կտոր դուրս հանուած նամակը ամբաստանելոյն ցոյց

տալով, « Տես, նոյնութեամբ փակցուած է սա տեղ պակաս մը կայ թէև, բայց դարձեալ կը կարգացուի » ըսաւ :

Փաստաբան Գրիգոր Էֆ. — Տէր նախագահ, եթէ թողտուութիւն կ'ընէք, ես ալ տեսնեմ Վսեմ. նախագահը հայերէն նամակները Գրիգոր Էֆէնտիին յանձնելով, Գարտուղար պէյին ալ հրամայեց կարգաւ անոնց թարգմանութիւնները: Ընթերցումը տեղի ունենալով և ամբաստանեալը՝ թարգմանութեանց սխալ եղած լինելը պնդելով, դատարանը որոշեց վերստին թարգմանել տալ զանոնք: Ապա վերսկսաւ հարցաքննութիւնը:

Նախ. (Երուսաղէմի նամակը ցոյց տալով) Այս նամակն ո՞րի՞չէ եկաւ: — Պալ. Երուսաղէմէն: — Նախ. Բայց քու ըսածիդ պէս գրուած չէ:

Պալ. Էֆէնտիմ, սխալ թարգմանուած է. դէմ եղած բաները գրուած են, թեր եղածները չեն գրուած. վերստին թարգմանուելը կը խնդրեմ. ոսկեթեւ արծուի մը խօսքը կայ հոն. 7000 տարի առաջ, այսինքն աշխարհի ստեղծումէն ի վեր Հայկ անունով խիստ զօրաւոր մարդ մը կար. մենք անկէ սերած ենք. Հայկ նոր սերունդ մը պիտի կազմենք ըսած է. նամակին մէջ գրուածն ալ այս է, տէրութեան և ազգին դպչելիք բան մը չկայ. ասոնց ամէնն ալ տպուած բաներ են. մինչեւ իսկ Կրթական Նախարարութեան հրամանաւ ամէն ժամանակ կը տպուին:

Գրիգոր Էֆ. — Միւս նամակներն ալ կըրնամ տեսնել:

Նախ. — Մտիկ ընէք, աւելի լաւ կ'ըլլայ: Գրիգոր Էֆ. — Այդ ինձ չը վերաբերիր:

Նախ. (Նամակները Գրիգոր Էֆէնտիին տալով). — Ասոնք ի՞նչպէս վնասակար չեն կրնար ըլլալ:

Պալ. Վնասակար չեն կրնար համարուիլ, վասն զի 10-15 տարի առաջ կը տպուէին, մինչեւ իսկ հիմա ալ կը տպուին: — Նախ. Տետրակիդ մէջ բանաստեղծութիւն մ'ալ կայ. « Հոգիս հոգւոյդ լինի մատաղ » աս ի՞նչ ըսել է. դուսն բանաստեղծ եմ: — Պալ. Ես բանաստեղծ չեմ. տետրակիին գիրն ալ իմն չէ. ո՞ր ժամանակ գրուած ըլլալն ալ չեմ գիտեր. 1000 տարի թէ՛ աւելի առաջ գրուած բաներ են. « Հոգիս հոգւոյդ լինի մատաղ » շատ հին է: — Նախ. կը տպուի կ'ըսես. ուրեմն ի՞նչու գրեցիր: — Պալ. Էֆէնտիմ, ձեր քով գրքի մէջ գրուած երգ մը կը տեսնեմ, գիրքը չեմ առներ, կ'օրինակեմ. մնաց որ այս գիրն իմն ալ չէ. կարելի է գրողն ալ գրքէն օրինակել: օրինակի համար գիրք մը կայ որ եկեղեցեաց մէջ կը կարգացուի, այս բաները մէջը գրուած են:

Նախ. Ազոնց թարգմանութիւններն ուրիշ են, քու ըսածներդ ուրիշ, վնասն ալ յայտնի է: — Պալ. Հրաման րբէք, վերստին թարգմանուին. Ոստիկանութեան դուռը կիսկաւոր հայերէն գիտցող ոստիկան մը թարգմանեց այս թուղթերը. եթէ այս թարգմանութիւններով գո՞հ ըլլաք, իմ իրաւունքս ոտնակոխ կ'ըլլայ:

Գրիգոր Էֆ. — Տէր նախագահ, եթէ կը ներէք, երկու խօսք ընեմ: Քննութեանց կատարումը երկու կողման համար ալ օգտակար է: Կարգացի վնասակար պարունակութիւն ունեցող այդ պատուած թուղթն, ինչպէս նաեւ Նախնեանի կողմէ զրկուած նամակը: Կարգացուած թարգմանութեանց ալ ուշադրութիւն ըրի: Պատուած թուղթին մէջ ամբողջ խօսքեր չկան, ինչպէս թարգմանու-

թենէն կ'երեւի. եղածներն ալ կարեւորութենէ զուրկ են. ուշադրութեան արժանի կէտերն աւրուած ըլլալու են որ իմաստ մը չ'ենեն. հետեւաբար պակաս մը կայ, պէտք է ձեռնհաս մարմնոյ մը կողմանէ թարգմանուի:

Նախ. Շա՛տ լաւ, նօտարի պաշտօնատան միջոցաւ թարգմանել կուտանք: (Խօսքը Պալ. տասարանին ուղղելով) Գրքերու մէջ գրուած է ըսիր. այս գրքերէն ունի՞ս: — Պալ. Ո՛չ: — Նախ. Ո՞ր կը գտնուի: — Պալ. Ձեմ գիտեր: — Նախ. Գրքի մէջ գրուած ըլլալն գիտես, իմ քովս չկայ կ'ըսես, գտնուած տեղն ալ չեմ գիտեր կ'ըսես. ի՞նչպէս կ'ըլլայ այս: — Պալ. — Գրաւթաճառաց քով կը գտնուի: — Նախ. Անունն ի՞նչ է: — Պալ. Անունը չեմ գիտեր: — Նախ. Այս ալ չ'եղաւ: — Պալ. Երգարաններու մէջ կայ: — Նախ. Ի՞նչպէս երգարան: — Պալ. Եկեղեցեաց մէջ Շարական անունով գիրք մը կայ, անոր մէջ գրուած է: — Նախ. Շատ լա՛ւ, այդ Շարականն ալ բերել տանք:

Գրիգոր Էֆ. — Նախնեանի նամակն ալ հարկ է որ ամբողջապէս թարգմանուի, որպէս զի միտքը հասկցուի:

Նախ. — Լա՛ւ: (Առ Պալ.սաւար) Աւասիկ ինչպէս որ խնդրեցիր, ադոնք պիտի թարգմանուին. թարգմանութիւնը մէկ քանի օր կը տեւէ. դու ալ մինչեւ այն ատեն եթէ ըսելիք մ'ունիս, փաստարանիդ կը հաղորդես:

Այդ թուղթերու թարգմանութեան սպասելու համար դատն ուրիշ օրուան յետաճը դուեցաւ:

Վերոյիշեալ թղթոց թարգմանութիւնը վերջացած և դատարանին յանձնուած լինելով, դատին չարուհանութիւնը այսօր տեղի պիտի ունենայ:

Ե Ր Ե Ք Լ Ե Զ Ո Ւ Ե Ա Ն

ԸՆԴԱՐՁԱԿ ԲԱՌԱՐԱՆ

ՏՃՃԿԵՐԷՆ, ՀՈՅԵՐԷՆ, ԴՈՂԵՐԷՆ

Յ Օ Ր Ի Ն Ե Ա Յ

ՄԻՋՐԱՆ ԱՔԻԿԵԱՆ

Թարգման Սպարապետի Դրան եւ Ուսուցիչ Օսմաներէնի, Պարսկերէնի եւ Արաբերէնի

Կը պարունակէ տաւել-քան 25,000 բառ և շուրջ 8000 ոճ և մտանաւոր ասացուածք

Սոյն գործ որ ցարգ իւր նմանը ունեցած չէ, կը պարունակէ Օսմաներէնի մէջ գործածուած հին և նոր թուրքերէն, Պարսկերէն և Արաբերէն բոլոր գրագիրական, պաշտօնական և ընտանեկան բառերն՝ հանդերձ բազում օգտակար ծանօթութեամբ, գիտական բառերն որպէս քերականական, թուաբանական, երկրաչափական, իրաւագիրական, բժշկական, բուսական, քիմիական, բնագիտական, զինուորական, վաճառականական, աստղաբաշխական, ևայլն, նաև քաղաքաց և երեւելեաց անուններ և առածներ:

Փառաւոր կազմե ալի գինն է 30, իսկ պարզ կազմաւորն 25 զրշ: Վարժարանաց 20 զրշ: Սոյն գներով գաւառներն ալ կը զրկուի փոխան թղթադրօշմի: Կեդրոնատեղին է Պօլիս, Մէրճան չարչը, Գուժրու խան, թիւ 8 սենեակը:

ԱՌԵԻՏՐԱԿԱՆ

—

ՄԵՏԱՔՍԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆՆ

Ի ԹՈՒՐԻՔԻԱ

Երկրի մը մէջ ճարտարութիւնը ու վաճառականութիւնն որքա՛ն բարգաւաճ վիճակի մէջ գտնուին, ո՞րքան աւելի խնամք տարուի նորագոյն դրութեանց համեմատ բարեօրոգումներ մտցնելու արուեստից մէջ, ա՛յնքան աւելի հարուստ ու բարգաւաճ վիճակ մը կ'ունենայ այն երկիրն. ասիկայ ա՛յնքան ինքնայայտ ճշմարտութիւն մ'է՛ որ գրեթէ աւելորդ է դիտել տալ. սակայն ցաւալի է որ շատ անգամ այս ճշմարտութիւնն պէտք եղածին չափ ի նկատ չ'առնուիր, նոյն իսկ երբ արգելիչ պատճառներ ալ չը գտնուին: Ծաղիկ՝ որ իրեն նշանաբան ընտրած է կարելի եղածին չափ շատ օգտակար ըլլալ ժողովրդեան՝ մերթ-մերթ տեղեկութիւններ պիտի տայ ճարտարութեանց ու վաճառականութեան օր քան զօր ըրած յառաջդիմութեանց վրայ, և պիտի ցուցնէ այն միջոցներն զորս ձեռք առնուլ պէտք է արուեստներն ու վաճառականութիւնն ևս քան զևս ծաղիկեցնելու համար:

Կ. Պօլսոյ վաճառականական սենեկի լրագիրը վերջերս Թուրքիոյ մետաքսային վաճառականութեան յօդուած մը նուիրած է, որով ուրախութեամբ դիտել կուտայ թէ շերամաբուծութիւնը քանի մը տարիներէ ի վեր յոյժ զարգացած է Թուրքիոյ այն գաւառաց մէջ յորս ամէնէն աւելի կը պարապին այս ճիւղով, և կ'ըսէ որ, եթէ իրաց այս ուրախաւթի ընթացքը արգելիչ պատճառներու չը բաղխի, քիչ ատենէն Թուրքիա մին պիտի լինի այն երկիրներէն որք առաջին տեղը կը գրաւեն մետաքսի արտադրութեան մէջ:

Եւ ապացուցանելու համար թէ ձրի ենթադրութիւնն մը չ'է ըրածն, ի մէջ կը բերէ Ատաբազարը՝ ուր երկու տարուան մէջ 10 հազար արտադարէ աւելի թթենի տնկած են, և եթէ ենթադրուի որ Տաճկաստանի միւս մասերն Ատաբազարէն վար չ'են մնար՝ իր յարմար թթենոյ մշակութեան, սա եզրակացութեան կը յանգիմք թէ ամբողջ Թուրքիոյ մէջ 200 հազար արտադարէն աւելի թթենի տնկուած է: Այս թթենիք՝ յաճախ երկրադործութեան կարեւորագոյն օրինաց համեմատ անկուած ու մշակուած չը լինելով հանդերձ, պիտի կարենան 3-4 տարուան մէջ առատ տերեւ տալ. արդ, եթէ ենթադրուի թէ մէկ արտադար թթենիով կարելի լինի առ նուազն մէկ ունկի (once) հունս բուծանել, քիչ ատենէն 6 միլիոն քիլօկրամ բոժոժ աւելի պիտի արտադրի, որոյ վրայ աւելցնելով այժմու արտադրութիւնը որ 7 միլիոն քիլոկրամէն պակաս լինելու չ'է, քանի մը տարիէն 13 միլիոն քիլոկրամ բոժոժ յառաջ պիտի գայ: Այս հաշուով Թուրքիա, յետ Իտալիոյ, մետաքս արտադրող առաջնակարգ երկիրը պիտի լինի:

Ապա, կը յարէ Առեւտրական սենեկի լրագիրը, քանի որ թթենոյ մշակութիւնն այս քան յաջողապէս կրնայ ի գործ դրուիլ ի Թուրքիա, ինչո՞ւ մերժել այն հարստութիւնն զոր իրաւունք մեզ բաշխելու պատրաստականութիւն կը ցուցնէ Թուրքիոյ հողն, ինչո՞ւ խընամբ չը տանիլ հողագործութեան նորագոյն մէթոտներն ուսուցանել ի վարժարանս, ինչո՞ւ չը դերձանել խեղճ գիւղացին այն կանխամուտ սովորութիւններէն զոր ժառանգած է իւր հօրմէն, որպէս զի կարելի եղածին չափ մեծ քանակութեամբ և լաւ տեսակ բըժոժներ ստացուին:

Այս տողերէ վերջ՝ լրագիրը ուրիշ տեսա-
կէտով մ'ալ կը քննէ խնդիրը։ Բժոժ ըսուած
ապրանքն, կ'ըսէ, հարուստ նախնական նիւթ
մ'է, բայց մասնաւորութիւն մ'ունի, այն է
թէ անոր արժէքն որոշելը բաւական դժուար
է։ Ստուգիւ, շատ մը պատճառներով բժոժ-
ներէն ելած մետաքսին քանակութիւնը
մէկին երկու կրնայ տարբերիլ, ուստի և բը-
ժոժներուն գինն ալ նոյն համեմատութեամբ
կը տարբերի։ արդ, ինչպէս պէտք է գիտ-
նալ բժոժէն արտադրուած մետաքսին քա-
նակութիւնը։ Առ այս, մանարանապետը
իրենց ներկայացուած ապրանք մէկ նմոյշ
կ'առնեն և կը փորձեն, բայց մանարանապետն,
որ ամէն բանէ առաջ իւր շահը կը մտածէ,
յաճախ կը կեղծէ ճշմարտութիւնը. բժոժին
տէրը՝ որ այս բանը գիտէ՝ զանազան մանա-
րանապետերու կը դիմէ և իւր բժոժը կու-
տայ ամէնէն աւելի գին տուողին, առանց
երբեք ճշդիւ գիտնալ թէ ինչ կ'արժէր
իւր ապրանքն։ Բժոժներու գինը կրնայ զա-
նազանիլ նաև մետաքսին տեսակին համեմատ,
այսինքն անոր առաձգականութեան, թելե-
րուն կանոնաւորութեանը ու հաստատու-
թեանը համեմատ, բաներ զորս պէտք է յա-
ռաջուց որոշել գիտնալ, որպէս զի գործառ-
նութիւնը լինին արագ ու պարկեշտ։

Երբ նախնական նիւթ չը գտնուի կամ երբ
խնդրանքը շատ լինի, մանարանապետը համ-
բարեւոյն նպատակաւ ապրանքին բուն արժէ-
քէն շատ վեր գիներով ծախու առնել կ'ու-
զեն, և ահա ինչու մեր մանարանապետը
մինչև վերջին տարիներս շատ շահաւոր գոր-
ծեր չը կրցին ընել, հակառակ գործողչքի
աժանութեան. ընդհակառակը, երբ ապ-
րանքն առատ լինի, ինչպէս այս տարի, գի-
ները տարապայման կերպով կ'իջնեն առանց
յայտնի պատճառի մը, այնպէս որ բժոժի
վաճառականութիւնը մեր մէջ ապրանքին բուն
արժէքին վրայ հաստատուած չ'է և ոչ ալ
կախումն ունի անոր քանակութենէն ու տե-
սակէն, այլ, առանց պատճառի, երբեմն տա-
րապայման կերպով փայլուն վիճակ մը կ'ըս-
տանայ, և երբեմն ալ կը տփգնի։ Դիւրին է
հասկնալ թէ իրաց այս վիճակն ո՛րքան փա-
սաբեր է, և ո՛րքան փափաքելի որ այս ան-
հիմն, ողորմելի դրութեան յաջորդէ այնպիսի
դրութիւն մը որ ապահովէ թէ՛ գնողին և
թէ՛ ծախողին շահերն, և միջոց տայ անոնց՝
գնահատելու ապրանքին իրական արժէքը։

Անգործ մետաքսի վրայ եղած գործառնու-
թիւնը ևս անմասն չ'են անտեղութիւններէ։
մանարանապետը՝ իրենց գործոց բարեւը ըն-
թացքը և գործարանաց շարունակ բանիլը
ապահովցնելու համար կարևոր եղած դրա-
մագլուխէն զուրկ լինելով, կ'ստիպուին շար-
թուան մէջ արտադրուած մետաքսը ծախել
տեղւոյն նշանաւոր վաճառականաց։ Արդ,
որովհետև մետաքսին արժէքը թելին տեսա-
կին, առաձգականութեանը ու կանոնաւորու-
թեանը համեմատ կը զանազանի, և որովհե-
տեւ մետաքսը խոնավութիւն չատ կը ծծէ,
մէկ հակ մետաքսի խոկական ծանրութիւնը
և արժէքը որոշելու համար կարևոր է անոր
խոնավաչափական աստիճանը գիտնալ. առանց
ասոր՝ անգործ մետաքսի վաճառականութիւնը
խարդախութենէ զերծ չը կրնար լինել։ Եւ
սակայն, այժմու վիճակին մէջ, մետաքսին խո-
նավաչափական աստիճանը, ապրանքին իրա-
կան ծանրութիւնը, տեսակը, և այլն, ո՛չ առ-
նողը կրնայ որոշել և ոչ ծախողը. ուստի և
հարկ է որ անկախ մարմին մը որ շահ չունե-

նայ գործառնութեանց մէջ՝ օրինակի համար
Տէրութիւնը, ինչպէս է Ֆրանսայի մէջ, հաս-
տատութիւն մը բանայ՝ որ բժոժի և անգործ
մետաքսի վաճառականութեան ընձեռէ պէտք
եղած ապահովութիւնը, այսինքն իրեն դի-
մողներուն ըսէ թէ իրապէս որքան մետաքս
կ'ենէ ներկայացեալ նմոյշէն, թէ ինչ է այն
մետաքսի թելին ճիշդ արժէքը, վերջապէս
ամէն տեսակ տեղեկութիւններ տայ մետաք-
սի թելերուն տեսակին, կանոնաւորութեանը
ու առաձգականութեանը վրայ, այս ամէնուն
փոխարէն առնելով վարձը մը՝ հաստատու-
թեան կանգուն մնալը ապահովելու համար։
Այս հաստատութիւն, որոյ թիւը ի հարկին
կրնայ պէտք եղածին չափ շատնալ, ո՛չ մի-
այն կատարեալ ապահովութիւն պիտի ընձե-
ռէ վաճառականութեան, այլ և յապագային
խթան մը պիտի լինի սերմանողներուն և մա-
նարանապետաց այնպիսի մետաքս արտադրե-
լու որոյ տեսակը վար չը մնայ Ալպէնի և հիւ-
սիսային իտալիոյ յառաջ բերած մետաքսի տե-
սակէն. այն ատեն բնականաբար գինն ալ
պիտի բարձրանայ, որովհետև մինչդեռ Ֆը-
ռանսայի մէջ արտադրուած անգործ մետաքսին
մէկ քիլոկրամը 60 ֆրանքի կը ծախուի, նոյն
տեսակ բժոժէն հանուած մետաքսը Թուրքիոյ
մէջ 52 ֆրանքի կը ծախուի. ինչո՞ւ կրեմք
այս վնասը։

ՊԱՏՄԱԿԱՆ

ՊԵՐԻԿՂԵՍԻ ԴԱՐԸ

Դա՛ր հոյակապ, որ փայլեցաւ մի անո՞վոր
փառքով և որ իւր հրաշակերտ արդեամբ
իր ամենափայլուն աստղերէ կազմեալ հա-
մաստեղութիւն մը՝ պիտի շողայ յարաժամ
պատմութեան երկնից մէջ ու պիտի շարու-
նակէ ազնուացիներու յաջորդող սերունդ-
ներն։

Ապաքէն յայնչաւոր Ժամանակաց հետէ
Ելլադա ունեցած էր իւր բանաստեղծներ,
իւր իմաստուններն։ Որիմոսի քնարին գիւթիչ
չեչտերն դժոխոց խաղաւորն իսկ էին գորո-
վեցուցած, և ի լուր Ամիլիոնի երգոց թէպէ
քաղաքին պարսպի քարերն ինքնին և կած է-
ին գլխուի մի զմիով։ Դարերով յառաջ Հո-
մեր երկու անմահ գիւցաղներդութեանց մէջ
երգած էր Յունաստանի գիւքն ու գիւցա-
ղունքն։ Եթեմերորդ և վեցերորդ դարուց
մէջ նախ քան զմեր թուականն՝ երաժշտու-
թիւն ու բանաստեղծութիւն միացեալ՝ հոգին
եղած էին Յունաց ազգային, կրօնական և ըն-
տանեկան հանգչաններուն։ Քնարական բա-
նաստեղծութիւնն, որ իւր անուան ճշգիւ կը
պատասխանէր յայնժամ՝ լինելով ընկերացեալ
քնարէն, յառաջ կը բերէր Սափփոյներ,
Աղիէոսներ, Անակրէոններ, Տիրաէոսներ, և
մանաւանդ գերազանց բանաստեղծն Պինդա-
րոս, որ գոգչես յոյն ցեղին միութիւնն կ'անձ-
նաւորէր ի հնութեան, ուր բաժնուած էր նա
այլ և այլ թագաւորութեանց ու հասարա-
կապետութեանց, և որ պերճ ներքողներու
մէջ կ'անմահացնէր յովիմալա, ի Դեդիփա, ի
Պարսոնոցն, ի Նեմէա մրցողաց փառքն։ Յե-
տոյ քան զժամանակն որ կը կոչի դար Պե-
րիկլէսայ, յունական հանճարն ծնունդ պիտի
տայ ի մէջ այլոց՝ Դեմոկրիտի որ զհովուեր-
գութիւն ստեղծեց, Պողիբի, պատմիչ իմաս-
տասէր, որ ուզեց բարձրէն գիտել մարդկա-
յին իրողութիւններն և գտնել զայն իրերաց

հետ շղթայող կապն, Ստրալոնի որ հին աշ-
խարհը մեզ գծեց, Պլուտարքէսայ որ իւր ըս-
քանչելի Վարքերով կացոյց զանձն դաստիա-
րակ ապագայ սերունդներու, և, ի ծաղիկե-
քրիստոնէութեան, Աթանասներու, Նազիան-
զացիներու, Բարսեղներու, Ոսկերեաններու
նման կրօնի հրաւելու քարոզչաց։ Բայց ոչ
երբեք յոյն բանաստեղծն և յոյն արձակաբանն
խօսեցան այնքան քաղցր, այնքան ներդաշ-
նակ լեզու մ'որքան Պերիկլէսան չըջանին մէջ
ուր աստիկեան բարբառն դարձաւ մի խօս-
եալ երաժշտութեան, և ո՛չ երբեք տեսնուե-
ցան՝ այնքան անձուկ միջոցի և տեղւոյ մէջ՝
այնքան խիտ առ խիտ հանճարներ, հոյակապ
երկովք բեղմնաւատ։

Աթէնքն է վառարան այս հրաշալի մտաւոր
գործունէութեան։ Մարական պատերազմաց
մէջ նա ստանձնեց առաջնորդող դեր և ե-
ղաւ ճշմարիտ մայրաքաղաքն Յունաստանի։
Քաղաքական փայլին խառնեցան գրականն ու
արուեստականն, և, ըստ բացատրութեանն
Թուկիդիտէայ, արդարեւ Ելլադայ դպրոցն
եղաւ Աթէնք։ Մարական պատերազմունք
մեծ ցնցում տուած էին ողբներու, և փա-
ռաւոր յաղթութիւնն՝ զոր ամի մի ժողովուրդ
տարած էր Քսերքսէսայ ծովափեալ բանակին
դէմ՝ նոր կեանքով մ'ողեւորեց զԱթէնս։ Ե-
րեսուն տարին որ այս մեծ քաղաքն իւր գը-
լուին ունեցաւ մեծ քաղաքացի մը, զՊէրիկ-
լէս, որ նորա ոյժերուն տուաւ ազնուական
ուղղութիւն, ինքն իսկ կազմեալ երկու չքնաղ
և բարձր անձնաւորութեանց ներշնչութեան
տակ, ոյց մին իմաստասէր մ'է գերազանց—
Անագասթոր— և միւսն կին մի մեծահոգի—
Ասպասիա։ Ուստի և կը ներկայանայ Պերիկ-
լէս՝ յաջոյն ասագոյ սերնդոց՝ շրջապատեալ ի-
մաստասիրաց, բանաստեղծից, պատմագրաց,
արուեստագիտաց առաւել քան արքայական
չքաղիւ խումբէ (cortège) մը, ոյց գործը կը
մնան ցայսօր գերագոյն օրինակը ճաշակի,
ընտրեալոյն դասը բարոյականի և պատիւ
մարդկային հանճարոյ իրր քաջայանդուգն
փորձը ի գիւտ ճշմարտին։

Թողունք ճարտարապետութիւնն ու ար-
ձանագործութիւնն, որք զԱթէնս զարգարե-
ցին հրաշակերտ տաճարներով, թատրոննե-
րով, արձաններով, ոյց մնացորդը ցայսօր ա-
ռարկայ են մեծի դարմանցման, և ամէլոյնք
մեր խօսքը գրականութեան վրայ։ Ահա
թաւրն ուր կը փայլին Եսքիլէս, Սոփոկ-
լէս և Եւրիպիլէս, պատկերացնելով մարդ-
կային սիրտն ի կուր ճակատագրոյն կամ
պարտուց հետ, և Արիստոփան՝ երգիծանելով
զթերութիւնս ռամկին և ռամկապետաց։ Ահա՛
բեմն հրապարակին ուր Պէրիկլէս, զոր Ո-
ղիմպեան յորջորջեցին, կը խօսի արդարեւ
աստուածային վեհութեամբ և առաքելի ու
իմաստասէր մարդու ճոխութեամբ, և զոր
յետոյ պիտի գողացնեն չեչաք Դեմոսթենէսայ
և Նաքիլէսայ։ Կը ծնի պատմութիւնը, որ ցայն
վայր խառն էր բանաստեղծութեան հետ.
Հերոդոտ կը գրէ իւր Մարական պատերազ-
մաց պատմութիւնը, կեդրոն որոյ շուրջ կը
բոլորէ պատմութիւնն բազում այլ ժողովրդոց.
Թուկիդիտէս կը պատմէ Պեղապոնեոսական
պատերազմն, առաջին անգամ դնելով քննա-
կան հետազոտող ոգին դիպաց դրուցին մէջ.
Քսենոփոն կը պատմէ ի մէջ այլոց՝ զԽառն
բիւրուց, գործ յորում, քաղցր է ինձ յիշել
սոստ զայս, կը խօսի նաեւ հին Հայոց բարուց
և կենցաղոյն վրայ։ Մեղուն Աստիկեան, որ-
պէս յորջորջեցին զՔսենոփոն, աշակերտն էր

Սովորապէս Ահա՛ մի այլ մեծ անձնաւորութիւնն այս բեղմնաւոր ժամանակին, զոր չպիտի վարանիմ կոչել մեծագոյնն՝ իրաւունք տալով Դեղլիսի պատգամին որ մարդոց իմաստնագոյնն զայն հռչակած էր։ Սովորապէս թշնամի Սովետայի, տուաւ նոր և հաստատուն ուղղութիւն իմաստասիրութեան, քննութիւնն նշանակեց պայման դիւտոյ ճշմարտութեան, և անձին ուսումն դրաւ ըսկիցն իմաստասիրական հետազոտութեանց։ Բարձրացաւ Աստուծոյ միութեան և հոգւոյ անմահութեան գաղափարաց։ Գաղափարաւորեալ ի մահ, դեռ կ'իմաստասիրէր՝ զուարթ իւր աշակերտաց հետ մինչև ի գիրկս մահու։ Ի սոցանէ պիտի ելնէ Պլատոնն աստուածային, խոնարհութեան հիմնադիր, որոյ աշակերտն, Արիստոտէլ, պիտի ներկայացնէ մանաւանդ գիտնական փորձարկող ոգին և իւր փիլիսոփայական ու գիտնական գործերով պիտի ապահովէ իւր անձին ճոխութիւն մը որ պիտի կտրէ անցնի դարեր և մինչև ժիւղար «վարդապետն ասաց»ը պիտի լռեցնէ ամէն ընդդիմախօսութիւն։

Փա՛ռք բոլոր այս մեծ ոգիներուն որք ճշմարտին, գեղեցիկին ու բարոյն եղան հետամուտք, որք այնքան վսեմ իմաստներու ընծայեցին այնպիսի վսեմ ու հրապուրելի բացատրութիւն, և որք մարդկութեան յառաջդիմական ընթացից մէջ եղան զամպարք լուսատուք։

Անմահ է փառքն Յունաստանի, մօրն այս հոյակապ ոգեաց։ Մարդկութիւնն յաւէտ երախտապարտ պիտի մնայ իրեն։

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐՅԱՆ

ՎԵՐԵԼԲ ՅԱՐԱՐԱՏ

ԺԺ դարը մեծ իրողութեանց և հանճարեղ գիւտերու ժամանակամիջոցն է։ Մեծն Արարատայ վերելքն ալ այս դարուս կը պատկանի։ Մօտեցա յարգելի ուն՝ Ճէյմս Պրայսի «Վերելք յԱրարատ» մակագրեալ գիրքը թարգմանեց որ սակայն չէր պարունակեր ո՛ր և է տեղեկութիւն իւր այն նախորդաց վրայ որք Ճէյմս Պրայսի բաղդն ունեցած էին։ Ուստի և հարկ համարեցի մի քանի տեղեկութիւն հաղորդել յայդմ մասին։ Թուրքֆօր ԺԺ դարուն մէջ լեռան միայն երկու երրորդը յաջողեցաւ վերելակել։ Ռուսիոյ Տօրադ քաղաքին անուանի համալսարանին գասատուաց մին՝ Պ. Բարօդ, 1829 տարւոյն սեպտեմբերին առաջին անգամ լինելով յաջողեցաւ Մեծն Արարատայ ամենաբարձր գագաթը հասնիլ։ Իրմէ վերջը գերմանացի և ռուս երկրախոյզը Պարոնայք Սրաքի, Ալթօնօֆ, Քարլ Պեհրենս և Ապիշ, անգլիացի մի զօրաշարժիկ Պ. Սէյմուր և հանրածանօթն Ճէյմս Պրայս աւելի կամ նուազ յաջողութեամբ կատարեցին այդ վտանգալից վերելքը և ամբողջացուցին Բարօդի նկարագրութիւնները։ Վերջերս ալ, այսինքն 1888 ին, երկու ռուս գիտնականք, Պարոնայք Մարքոֆ ու Բօրօֆ, և 1889 ին ռուս մի օրիորդ այդ աշխարհահռչակ լեռան բարձունքէն կրցան գիտել այն սքանչելի գեղանկարը որ կը պարզուի հոն գտնուողին աչացն առջեւ։

Պեհրենս գտաւ այն խաչը զոր Բարօդ կանգնեց լեռան գագաթը։ Ապիշ Արարատայ պատկերը գծեց ըստ բնականին և կարգ մը կարեւոր դիտողութիւններ ըրաւ Արարատայ

հրաբխային դուրսեան վրայ։ 1850 Յունիս ամսուն Անդրկաւկասիոյ եռանկիւնաչափական քարտեքը պատրաստելու համար Քօցքօ գնդապետին հրամանատարութեան ներքեւ յանձնախումբ մը կազմուեցաւ, որոյ յանձնեց ռուս կառավարութիւնը Մեծն Արարատայ վրայ կատարուելիք գիտական մի պաշտօն։ Քօցքօ գնդապետին ընկերացան Տէրութեան խորհրդականներէն մին՝ իյանիքօֆ և մի քանի ռուս սպայք։ Պ. Սիմոն Նարոյեան որ Ապիշի ուղեկցած էր մինչ ի գագաթն, այս խմբին ալ ուղեցոյցն եղաւ։ Իրենց կը հետեւէին 50 քօղաքներ՝ կրելով բեռ, պաշար և գործիք, առ ի չգոյէ ձիոց։

Պուսմը օգոստոս 1 ին սկսաւ վերելքը։ Ճամբուն վրայ ձիւնը դիզուած էր, և եթէ խմբին չ'ընկերանար քօղաքներու այդ եռանդուն ջոկատը, անկարելի էր յառաջանալ։ Այդ քաջ մարդիկ ձիւները կ'աւելին և ճամբուն երկու կողմը կը գիզէին։ Վերջապէս հազար ու մէկ դժուարութեամբ, երկու օրէն կրցան հասնիլ գագաթան անմիջապէս ստորոտը գտնուող Ժայռերու վերջին շղթային ներքեւ։ Օգը միշտ փոթորկալից էր։ Հոյն իւր ուժգնութիւնը կը կրկնապակեր։ Եւ ահա ի լրումն այդքան դժուարութեանց, թանձր մառախուղ մ'ալ պատեց լեռը։ Այդ անյողդողդ մարդիկ յոգնութենէ պարտասեալ և ընդարմացեալ էին, այլ լեռի Ժայռերն և ոչ մի ապաստանարան կը խոստանային իրենց։

Այս վերելքին նկատմամբ Լօնկինօֆ՝ Բարիզու աշխարհագրական ընկերութեան պաշտօնաթերթին մէջ 1851 ին երկար նկարագրութիւն մը հրատարակած է, որոյ հետեւեալ մասը հարկ կը համարիմք թարգմանել։

«Գնդապետը որոշեց իւր մարդոց մի մասն արձակել և երկու քօղաք միայն իւր քովը պահելով, հրամայեց այլոց թագէթ-Քալէսի երթալ ուր կանխահոգ մտածութեամբ վրան մը թողած էին։ Յետոյ սպայից և ուղեցուցին հետ փոքր հարթավայրի մը վրայ զետեղուեցան, սակայն այդ հարթավայրը երեք քայլ երկայնութիւն և մէկ ու կէս քայլ լայնութիւն միայն ունէր։ Գնդապետն և իւր ընկերք կարելի եղածին չափ իրարու քով կ'ըկուեցան։ Իրր ծածկոց միայն կոտոր մը կապերու և դործիները անձրեւէն պատսպարելու համար գործածուող կաշի մ'ունէին։ Այսպէս գիշերն անցնելու պատրաստուեցան, և ամենեւին իրենց տեղէն չը շարժեցան, զի գըլտորելու վտանգ կար։

«Սակայն հոգուն սաստկութիւնը գամ քան զգամ կը սաստկանար։ Լեռն ամէն կողմէ ամպերով ծածկուած էր։ Բռնաշունչ հոգը երբեմն կը պատուէր այդ թանձր վարագոյրը և պատառուածքներէն լուսնոյ տփռոյն լուսովը երեւան կուգային մերթ Արաքսի հովտին մի մասը կամ Փոքր Արարատայ չըջաղիծը, որոյ գագաթը մինչ ցոյն վայր իրենցմէ բարձր, այդմ իրենց ոտից ներքեւ կը խոնարհէր, և մերթ ևս գահավէժ անդունդներ որք կը շերտաւորէին իրենց այդ հիւրամերժ ապաստանարանը, Սպիտակ լեռնէն (Մօն Պլան, 4810 մէթր) աւելի բարձր գիւղը մը։ Եւ ի լրումն չարեաց, երեկոյեան ժամը 10 ին մի բուռն փոթորիկ սկսաւ։ Դայլակներուն ցլոքէն և որոտման ուժգնութենէն ուղեւորք կրցան ըստուգել թէ նոյն իսկ ելեքտրական ամպերուն մէջ կը գտնուէին։ Պայթմանց միջոցին ելեքտրականութիւնն օդոյ մէջ ոչ թէ օճապտոյտ կը փայլէր, ինչպէս միշտ կը լինի, այլ յանկարծակի և վայրկեանական կերպիւ շրջուցիչ

լուսով մը կը լեցնէր անջրպետը, տեղ տեղ կանանչ, կարմիր ու սպիտակ գոյներով։ Որոտմունք գրեթէ անմիջապէս կը հետեւէին փայլակներուն։ Այդ սոսկալի գոռիւնք երկարատեւ արձագանգներ յառաջ կը բերէին լեռանը թաղմաթիւ նրբանցքներուն մէջ։ Կէս գիշերուան մօտ փոթորիկը հանդարտեցաւ, բայց ձիւնը շարունակեց տեղալ խոշոր տարախներով։ Մեր երկրախոյզը տեղերնուն շարժած չլինելով, երեք չորս բթաչափ թանձրութեամբ ձեան սաւանով մը ծածկուեցան։ Վերջապէս լոյսը ծագեց։ Գագաթանց ամպամած քօղը փարատած էր, այլ ընդհակառակն Փոքր Արարատայ կողերն ու բոլոր ստորին երկիրը որք պարտէին սքանչելի տեսարան մը ընծայել այդ բարձունքէն, կ'աներևութանային ամպերու անթափանցելի վարագոյրի մը ներքեւ, որ վերէն գիտուելով՝ ալեծուփ և սառուցեալ ծովու մը նմանութիւնը կ'ըզենուր։ Քանի արեւը կը բարձրանար հորիզոնին վրայ, այդ միջավայրէն շոգիներ կը վերանային որք նախ և առաջ թեթեւ ծուխի նման երթալով թանձր ու ձիւնալից մ'ունեցրու կը փոխուէին։ Ժամը 3 ին մօտ երկինք քիչ մը լուսաւորուեցան, բայց հովը միշտ ուժգնութեամբ կը շնչէր։ Զոկատին կացութիւնն այնչափ անտանելի եղաւ որ մոտադրեցին շարունակել վերելքը, յուսալով թէ Ժայռերուն շղթայէն անդին կրնային գտնել տափարակ սարահարթ մը։

«Ժամը 4 ին ճամբայ ելան, բայց Ժայռերու երրորդ շղթայէ մ'անցնելէ յետոյ միայն կրցան փափաքելի սարահարթը հասնիլ։ Առ նուազն 50 աստիճանի հակում ունեցող զառ ի վայր մ'էր այդ տեղը, բաւական մեծ կակ հրաքարեր սփռուած էին աստ և անդ, և ծծումբի անտանելի հոտ մը կը բուրէին։ Այլ կողմը կ'երկարի այն երկայն փոսը որ գագաթան մօտէն սկսեալ մինչեւ թագէթ-Քալէսի կը յանգի։ Զախ կողմն ուրիշ փոս մը կայ աւելի խոր, որ կը միանայ Մաքէնսքի սառնակոյտին։

Երբ այդ սարահարթին մէջտեղը հասան, որ գագաթէն միայն 200 քայլ վարն է, այլ ևս յառաջանալ անկարելի էր, որովհետեւ հոյն ու յոգնութիւնն ամէն շարժում կը ջլատէին։ Մեծ ձիգերով յաջողեցան վրան մը կանգնել սարահարթին նուազ առ շեղ մէկ կողմը, այսինքն 30-40 աստիճանի հակման վրայ։ Զոկատեղ երեք գիշեր և երկու օր, այսինքն օգոստոսի 3 էն 5, այդ տեղը մնաց։ Այդ միջոցին հովը՝ ձեան և կարկուտի հետ ընկերացած՝ գըրեթէ միշտ կը փչէր, և միայն օգոստոսի 6 ին տկարացաւ։ Յայնժամ Մեծ ու Փոքր Արարատայ բոլոր նրբանցքները լուսաւորեցան։ Հորիզոնին վրայ ամպերու բարակ շղարչ մը միայն կար, որ կը պսակէր Ղարաբաղի հեռաւոր գագաթները և Սավալանի անհեթեթ հողակոյտերը, որոց ստուերագծերը որոշակի կը պատկերանային յարեւելս։

Քօցքօ գնդապետն (այժմ գորավար) ու իւր ընկերներն կրցան յայնժամ խուզարկել կրկին գագաթները, և հասնիլ լեռան ամենաբարձր հարթավայրը, 1132 քայլ երկայն տեղ մը ուր զետեղուեցան։ Եւ վերջապէս խոր ձորէ մ'անցնելէ յետոյ, Մեծն Արարատայ 5360 մէթր բարձր գագաթան վրայ ելան։ Քօղակները ձիւնէ բուրգ մը կանգնեցին հոն 2 մէթր բարձրութեամբ, և վրան ալ նոյնչափ երկայնութեամբ խաչ մը տնկեցին։ ինչին գամուած պղնձեայ տախտակի մը վրայ վերելքին թուականը և յանդուգն երկրախոյզներուն անունները գրուած է։

Վ. ՊԱՅՆՔԱՆԻ



ԳԻՏԱԿԱՆ

Պ. Էսթրադոն՝ բժիշկ . — Ելեհստակաճութեամբ բժշկութիւն . — Լուսանկարն եւ աստղագիտութիւն . — Երկնից պատկերն «Բիւլետէն» մը վրայ . — Ապագայ աստղագիտութիւնն . — Արեգակնային դրութեան ամենափոքր աստղերն . — Ենթադրութիւն մը :

Պ. Էսթրադոն ճշմարտագէտ գործող մարդ մ'է, աշխատութեան չը ձանձրանար բնաւ . ելեքտրականութեան այն ընդարձակ ասպարէզն ուր կը գտնուի՝ չը բաւեր իրեն համար . բըժիշկներու հետ մրցման կ'ենէն և Պէրլինի բժշկական վեհաժողովին տեղեկագրեր կը զրկէ յորս այնքան բացայայտ և յստակ կերպիւ հիւանդութեան մը դարմանման նորահնար եղանակը կը նկարագրէ :

Յօդագաւը (Goutte) սովորական հիւանդութիւն մ'է որուն կ'ենթարկուին մեր յօգուածներն և կարող չեն լինի իրենց շարժումներն կանոնաւորապէս ընելու . այն ատեն ամենափոքր շարժում մը դժուարին կը կատարուի և սաստիկ ցաւերու պատճառ կը լինի միանգամայն : Բժշկութեան մէջ հաստատուած է թէ Sel de lithine միակ գեղն է այդ ահուգի ախտին : Էսթրադոն խորհած է այդ աղը ուղղակի մարդկային մարմնոյն հիւստածոց մէջ մտցնել հոսանայ մեքենական զօրութիւնը գործածելով : Եւ ի՞նչ ըրած է : Հիւանդին ձեռներն և ոտներն երկու տարբեր անօթներու մէջ դրած է, որոց մին Sel de lithine-ի բաղադրութեամբ լեցուած, իսկ միւսն աղի ջրով : Առաջին անօթին մէջ դրուած է դրական բեւեռն, իսկ երկրորդին մէջ ժխտական :

Աղը հոսանքին միջոցաւ դրական բեւեռնէն ժխտական բեւեռնին վրայ կ'անցնի, մորթին մէջ կը մտնէ, և կուգայ աղբել այն ձեռքին կամ ոտքին վրայ որ դրական անօթին մէջ ընկղմեալ է : Միւս անգամ անշարժ կը մնայ, կը ծառայէ միայն իւր մէջէն հոսանքն անցնելու : Եթէ այդ անգամն եւս հարկ լինի բըժշկել, պէտք է բեւեռները փոխել :

Պ. Էսթրադոն փորձեր կատարած է և 76 տարեկան ծերունի մը յաջողած է փրկել յօգացաւէն : Մեծահոգակ հնարիչն չը բաւականանար այս գիւտերով և աշխատութիւններով, յառաջ կը վարէ իւր խուզարկութիւններն և կը ջանայ ուրիշ ախտաբանութեանց մէջ եւս օգտակարապէս գործածել ելեքտրական հոսանքն : Հետեւաբար Պ. Էսթրադոն կը լինի դարուս ամէնէն նշանաւոր ելեքտրագէտ բժիշկն :

Կը թողու՞մք Էսթրադոն իւր աշխատութեանց մէջ և մեր անարկներն կը բարձրացնեմք դէպ յ'երկնականմարն : Վերջին աշխատութիւններն ուշագրաւ են . նպատակ ունին երկնային պատկերն իւր բովանդակ ճշգրտութեամբ լուսանկարել առանց մոռնալու իւր անթիւ համաստեղութիւններն : Փարիզու գիտարանին տնօրէնն Պ. Մուշէ օրինակելի աշխատողներէն մին է . նա՛ միայն կրնայ լիովին գոհացընել զմեզ՝ աստեղագիտութեան մէջ լուսանկարին առաւելութեանց վրայ խօսելով : Մարտ 31-էն վերջ աշխատութիւնը պիտի սկսին և կրնամք ապահովաբար ըսել թէ՛ չորս տարիներ անհրաժեշտ են կարենալ ճանաչելու համար 30-40 միլիոն աստղեր, Հարկաւ դժուարութիւններ պիտի յարուցանէ կեդրոնական կայարանի մը հիմնարկութիւնն որ այնքան անհրաժեշտ է նմանօրինակ մեծ աշխատութեան մը համար :

Երկնային քարտէսը պիտի բաղկանայ 1800 կամ 2000 թերթերէ . պիտի ներկայացնէ ըստ

բաւականի մեծ աստիճանի մը վրայ ա՛յն 42 հազար քառակուսի աստիճաններն որոցմէ կազմուած է երկրագնդին մակերեսն : Այս այն քարտեաներէն պիտի լինի որ ապագայ աստեղագիտաց մեծագոյն օգտակարութիւններն պիտի մատուցանէ և ուր աստեղագէտք ամէն ժամանակ պիտի կարենան իրենց սըրբագրութիւններն կատարել անակնկալ և կարեւոր գիւտերով : Մանրագէտը պիտի կատարէ գեղեցիկ պաշտօն մը . անոր շնորհիւ մըթին կէտեր պիտի լուսաւորուին և իւրաքանչիւր Բիւլետէն վրայ պիտի ներկայացուի որոշակի կերպիւ ամենափոքր աստղն : Եւ եթէ կուգէք գաղափար մը ստանալ թէ ինչպէս աստղ մը կը լուսանկարուի, հարկ է գիտնալ թէ՛ առաջին մեծութեամբ աստղի մը համար կէս հարիւրերորդ երեւոյթիւնի տևողութիւնն բաւական նկատուած է, և վեցերորդ մեծութեամբ աստղ մը մէկ ժամ քսան վայրկեանի տևողութիւն մը կ'ուզէ : Լուսանկարը աստեղագիտութեան մէջ եթէ գործածուի, կատարելապէս պիտի փոփոխէ աստեղագիտաց աշխատութիւններն և կիսով չափ ժողովրդական պիտի ընէ երկնից ուսումն :

Հաւագոյն հեռագէտով հազիւ տեսնուած աստղ մը այսուհետեւ լուսանկարին շնորհիւ յայտնի պիտի նշմարուի, և երկնային կամարին պատկերը պայծառ և յստակ տեսանելի պիտի լինի Բիւլետէն մը վրայ : Ամէն աստղ, մեծ թէ փոքր, պիտի արձանագրուի թուղթի կտորին վրայ, և այնուհետեւ աստեղագիտաց համար ապագային մէջ աշխատութեան նոր թուական մը պիտի բացուի . անոնց միակ գործը պիտի լինի գիտել աստղերու դիրքը, ուսումնասիրել անոնց շարժումներն և հետամուտ լինել նոր աստղեր գտնելու և այսու ճոխացնելու երկնային քարտէսն :

Օր մը կը յուսամք տեսնել այդ նոր քարտէսն, բայց քարտէսէն առաջ աւելի կարեւոր չէ՞ միթէ ճանաչել այն անթիւ փոքր աստղերն որք կը զարդարեն արեգակնային դրութիւնն : Հրատի և Արամազդի միջև, 67 միլիոն փարսախ լայնութեամբ գտուող մը վըրայ, արեգակէն 142 միլիոն փարսախ հեռի կը գտնուի խումբ մը անթիւ մանրագիտական աստղերու, որոց թիւն այսօր կը բարձրանայ երկու հարիւր իննսուն եւ չորսի :

Պ. Նիսթէն, Պրուսիոյ արքունի գիտարանէն, մեծագոյն աշխատութիւններն կատարած է այս 200 ի մօտ աստեղաց վրայ և լուսաչափական (photométrique) դրութեամբ կարողացած է յայտնել անոնց ծաւալն ու ձևն :

Երեք գլխաւորներուն տրամագծին մեծութիւնը հազիւ 200 քիլոմիթրօէն սակաւ ինչ վեր է : Վէսթա, 370 քիլ. Սէսէս 369 քիլ. Բալլաս 278 քիլ. Սոցա կը կը յաջորդեն երեսուն և մէկ աստղեր որոց տրամագիծն կը հաւասարի 100 կամ 200 քիլոմիթրի : Սոցա վրայ աւելցուցէք նաև այն հարիւր տասն և մէկ փոքր մոլորակներն որոց տրամագիծն է 50 քիլոմիթր : Ամէնէն փոքրիկ աստղ տրամագիծն 7 քիլոմիթր է . . . Այս երկու հարիւր վաթսուն և հինգ աստեղաց ամբողջ ծաւալն ուրբ հազար հինգ հարիւր եօթանասուն եւ հինգ անգամ աւելի փոքր է քան երկրի ծաւալն . եթէ այս աստղերն ի մի հաւաքուին, կը կազմեն երկնային մարմին մը 620 քիլոմիթր տրամագիծի՝ որ քսաներորդ մասը կը կազմէ երկրի տրամագիծն, որոյ չափն է 12 700 քիլոմիթր : Եւ պէտք է գիտնալ թէ՛ ամէն տարի այս փոքրիկ աստեղաց թուոյն վրայ յաւելում կը լինի նորանոր աստղերու յայտ-

նութեամբ, և հաւանական է թէ՛ սոքա եւս գտնուեր են ուր կեանքը գոյութիւն ունի իր ամէն երեւոյթներով : Արդարեւ, այդ փոքր աստեղաց իւրաքանչիւրն մէն մի բնակելի աշխարհ է : Երկրի վրայ կաթիլ մը ջուրն փոքր աշխարհ մ'է՝ կազմուած անթիւ գործարանային էակներէ և, ի՞նչու այդ աստեղաց հոյքը դատապարտուած լինի անապատային և ցամաք վիճակի մը : Հեռագէտը և աստեղագիտին մանրախոյզ աշխատութիւնն ի վեր հանած են ի նոսա մթնոլորտական խաւի մը գոյութիւնն . հետեւաբար ի՞նչու չը դնեմք ի նոսա կեանքն իւր ամէն երեւոյթներով : Ի՞նչու չը հաւատամք գործարանաւոր էակաց գոյութեան՝ մեր երկրային դրութեանէն բխրապատիկ աւելի փոքր այդ աստղերու բազմութեան մէջ :

Չը մոռնամք յիշատակել մեր արեգակնային դրութեան մէջ երկու նոր աստղերու գոյութիւնն, Փօպուս և Տէյմօս, առաջնոյն տրամագիծն 12 քիլ. և վերջնոյն՝ 10 քիլ. : Այս վերջինք եւս փոքրիկ աշխարհներ են կեանքով և շարժմամբ լի :

Եւ ապագային մէջ դեռ ի՞նչ մեծ քայլեր պիտի առնու աստեղագիտութիւնն :

Մ. Գ. ՄՈՋԵԱՆ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆ

Առողջ մարմին առողջ հոգեւով (1)

Յօդագաւ, հոյակապ լատին երգիծաբանն, իւր տասներորդ երգիծաբանութիւնն կը նուիրէ ձաղկելու մարդոց անհեթեթ սնտախառութիւնն, որով նոքա համբաւոյ և շոնգի ըզհետ կը պնդին, դժգոհ այն բարիքներէն զորս առ ձեռն պատրաստ ունին՝ կ'աղմկեն զաշխարհ զինուց շաշխուով, վտանգէ ի վտանգ կը թռչին, երկրէ յերկիր կը սուրան, խնդրելով փառք մ'որ ամենուրեք կը խուսափի իրենցմէ, և կը վերջացնէ՝ խորատելով զմարդիկ չտագնապիլ փոռափորական ունայն խորհուրդներով ու անսպառ իզձերով և ո՛չ այլ ինչ խնդրել Աստուածներէն՝ բայց միայն «Առողջ միտք առողջ մարմնոյ մէջ» :

Mens sana in corpore sano .

Յօդագաւի այս խօսքն առածի մը կարգ անցաւ, և նշանակելով այլ ինչ քան զոր նշանակած էր ի սկզբան բանաստեղծին գրչին տակ՝ յեղեղեղեղաւ բազում անգամ, մանաւանդ վերջին ժամանակաց մէջ : Հեղինակն ուզած էր ըսել թէ երկու մեծագոյն բարիքն զոր մարդ կրնայ խնդրել երկինքէն՝ է հոգեւոյ և մարմնոյ առողջութիւնն . առողջ լինել հոգեւով և առողջ լինել մարմնով, ահա՛ այսմ մանաւանդ պարտին ցանկալ մարդիկ : Բայց այլ ինչ սկսաւ նշանակել, — այն է թէ հոգեւոյն առողջութիւնն մարմնոյ առողջութեանէն կախումն ունի, և իբր այն՝ նշանաբանն իսկ եղաւ մարմնամարդական ընկերութեանց :

Գեղեցիկ օրինակ մ'է այս իմաստներու խեղաթիւրման՝ հեղինակի մը մէկ խօսքն իւր տեղէն հանելով և առանձինն նկատեալ, դնելով անդ կամ գտնելով մտքեր որք հեղինակին մտքէն չէին անցած բնաւ :

Բայց մեր խնդիրն այդ չէ՛ . խօսքն իր նոր իմաստով առնելով՝ ճշմարիտ է թէ մտքի կամ

(1) Պերպերեան վարժարանի այս տարւոյ մրցանակաբաշխութեան հանդիսին մէջ արտասանուած աւարտական ճառ :

հոգւոյ առողջութիւնն կախումն ունի մարմնոյ առողջութենէն կամ միայն անկէ, և թէ չէ՞ կարելի ըսել միանգամայն «Առողջ մարմին առողջ հոգւով» : Ահա՛ւասիկ ինչ որ կուգեմ պարզել մի քանի խօսքով :

Ճշմարտութիւն մ'է թէ ի մարդն հոգին այնպէս սերտ կապակցութիւն ունի ընդ մարմնոյ, որ սա մեծապէս կ'ազդէ նորա վրայ : Հասակի, սեռի, խառնուածի, առողջական վիճակի, կլիմայի և նոյն իսկ կերակրոյ տարբերութիւնք զանազանութիւն յառաջ կը բերեն հոգեկան վիճակաց մէջ և իրենց նպաստաւոր կամ աննպաստ ազդեցութիւնն ունին :

Եպիկուրեանն, Լուկրետիոս, Նիւթապալտ փիլիսոփայութեան ներշնչեալ առաքեալն ի հնութեան, կ'ըսէր արդէն տասն և ինն դար յառաջ «Ակնեբն է թէ մարմին և հոգի ի միասին կը ծնան, կը մեծնան և կը զօրանան ի միասին, միանգամայն կը հասնին հասունութեան, մի և նոյն ժամանակ և կ'սկսին տկարանալ, վատիլ, ի մահկութիւն անկանիլ, հոսկ կորնջել միանգամայն» : «Եւ հոգին, կը յաւելու, իբրեւ ծուխ իմն կը ցնդի օդոց մէջ» : Առանց կանգ առնլու աստ հերքելու համար նիւթապալտ վարդապետութեան եզրակացութիւնքն հոգւոյ բնութեան և վախճանին վրայ, կ'ըսեմք թէ ընդհանրապէս ճշմարիտ է Փիլիքեականին ներգործութիւնն բարոյականին վրայ, զի մարմին լինելով գործի մ'ի ձեռս հոգւոյ՝ ի հարկէ գործողն գործիչն կախում ունի մինչեւ մէկ աստիճան, և աստ հոգին՝ մարմնէն : Այս, երբ մարմինն տրկար կամ հիւանդ է, հոգին բոլորովին առողջ վիճակի մէջ չէ անշուշտ, կամ թէ չէ կարող գործել ու արտայայտուիլ այնպէս որպէս երբ կայտառ մարմին մ'ունենար իւր արամադրութեան տակ : Հիւանդին մոտածութիւններն տխուր՝ մեղամաղձոտ են, միջին գոյնի մը տակ կը տեսնէ ամէն ինչ, իրաց վրայ իւր գաղափարք կը փոխուին, հաստատութիւն չկայ իւր խորհրդոց մէջ, և կորուսած է մարմնոյն հետ կորովն ալ իւր մտքին :

Միայն թէ բացարձակապէս չառնուի այս : Ծարտար արուեստագէտ մը ջախջախ քնարի մը բեկրեկ թեւերէն ալ կարող է զմայլելի ներգաղանկութիւն մը հանել : Նոյնպէս և տեսնուած են յաճախ տկար ու հիւանդագին մարմնով էակներ որ հոգւոյ արիւթեան և զօրութեան հրաշալի փորձեր տուած են հանճարներ իսկ չեն սպասած աղառողջ տկար մարմիններու մէջ բնակեալ : Բա՛ւ է յիշել Ռիչլիէօն, Բասքալը, Վոլմարկը, և Վոլգէր որ միշտ մօտ էր մեռնելու, և որուն համար կրնայ ըսուիլ թէ հոգւոյն կորովը մահաւանդ պահեց մարմինն մինչ ի հասակ ութսունեւ չորս ամաց : Սմա հակառակ, քանինե՛ր կան որք կորովի մարմին մ'ունին, այլ վտիտ տկար միտք մը : Գեթուարին չէ պատահիլ հսկայ մարմնոյ մ'ոյր բնակիչն է թզուկ հոգի մը : Թեան մեծ է, բայց չարժիչ չոգին փոքր ու անզօր : Այս յայտնի է թէ, թէ և հոգւոյն առողջութիւնն սերտ առնչութիւն ունի մարմնոյն առողջութեան հետ, բայց իւր աղբիւրն տարբեր է : հոգւոյն առողջութիւնն իւր յատուկ պատճառն ունի, որ է մանաւանդ քանակն ու որակն այն սննդեան որ իրեն կը տրուի, այն սկզբանց ու կրթութեան որ իրեն կը մատակարարուին, — ի բաց առնլով ընդարոյս ու փառանգական յատկութիւններ կորովոյ, պայծառութեան, թափանցողութեան, այլովքն հանդերձ : Հոգին պէտք է որ իր յատուկ սնունդ առնու և մարզուի իւր յատուկ կեր-

պերով որպէս զի առողջ և զօրաւոր լինի, ինչպէս մարմինն ունի իւր առանձին պէտքն կազդուրիչ սննդեան և հրահանգաց :

Այսու հանդերձ, պէտք է՝ նոյն իսկ հոգւոյն առողջութեան կամ առողջ և ուժեղ և արդիւնաւոր գործունէութեան տեսակէտով՝ փոյթ ունենալ մարմինը գերծ պահելու այն ամէն բաներէ որք կրնան զայն քայքայել, և ի գործ դնելու այն միջոցներ որք կը նպաստեն նորա զօրութիւնները պահպանելու և զարգացնելու, զի գործողին լաւութիւնն անշուշտ կարեւոր պայման է գործին լաւութեան :

Միւս կողմէն սակայն պէտք չէ՝ մոռնալ այն մեծ ազդեցութիւնն զոր հոգւոյն առողջութիւնն ունի ի վերայ մարմնոյ առողջութեան : Եթէ, իւր նոր իմաստովն ալ, ճշմարիտ է՝ մինչև մէկ աստիճան Յորնալի խօսքը «Առողջ միտք յառողջ մարմնի», ոչ նուազ և թեւեւս առաւել իսկ ճշմարիտ է ըսել «Առողջ մարմին առողջ մտք», առողջ հոգւով» : առաւել իսկ, այո՛, վասն զի հոգին է որ կը վարէ զմարմին : Կարելի է ուրանալ ընդհանրապէս բարոյականին ազդեցութիւնն ի վերայ Փիլիքեականին, հոգւոյն ի վերայ մարմնոյն :

Մեր մարմին կը հնազանդի մեր հոգւոյն շարժմանցն ու հրամանաց, մեր հոգեբանական կացութիւն իւր անվրէպ հակահարուածն ունի ի վերայ մարմնոյ կացութեան : Դիտարեմք՝ որք հոգւոյն բուռն բերմունքն են՝ դէպ յայս ինչ կամ յայն՝ գրգռում և յուզում յառաջ կը բերեն մեր զգայարանաց մէջ : ուրախութիւն լուր մը կրնայ հիւանդն իւր անկողնոյն մէջ կանգնեցնել առողջացեալ, կամ յանկարծ հասնելով՝ կրնայ առողջ մարդն սպաննել : վշտալի գաղափար մը կամ խղճի խայթ մ'ամէնէ կորովի մարմինը կարող է հիւժեւ և սպառել տակաւ : վիրաւորեալ և մահաւերձ մարդն՝ իւր հոգւոյն զօրութեամբ՝ դեռ կարող է դիւցազնանալ : հաւատոյ նահատակք՝ իւրեանց ներքին համոզումէ հզօրացեալ կը տոկային դժնգակ խռտանգանաց : Ուրեմն ի՞նչպէս հոգւոյն առողջութիւնն չնեղործէ ի վերայ առողջութեան մարմնոյ : Անուրանալի է թէ մարմնական ո՛չ սակաւ հիւանդութիւնք ունին բարոյական՝ հոգեկան պատճառներ, և իմաստասէր բժիշկը մարմնային աւերումներու պատճառներն այդ աւերակաց բեկորներուն մէջ չը խուզարկեր միշտ : գնիւթ հարցափորձելէ յուսահատ՝ պահ մ'ի բաց կը թողու իւր ականջափողն ու ջերմաչափ, և հիւանդին հոգւոյն կ'ուզէ իւր նայուածներ : բնախօսական զննութեան տեղ կ'անցնի հոգեբանականն, որով շատ պարագայից մէջ կը յաջողի ի յայտ բերել գաղանիքն զոր կ'որոնէր : — Անկարգ խառնակեաց կեանք մը, անսանձ արշաւն կրից, զգայամոլութիւն, անբարեխառնութիւն աղբիւրներ են մարմնակեր ու մահահրաւէր ախտից, և սակայն ի՞նչ են իրենք, եթէ ոչ հոգեկան հիւանդութիւնք :

Անողջախոհ, անհաւասարակչիւ հիւանդ միտք մը ազատ առաքելք կը բանայ ջղային դրութեան անկարգութեանց ու գրգռմանց, որք մարմնական լուրջ հիւանդութեանց շարժառիթք կը լինին : Հանդարտ, անխեղ, զուարթ, ողջմիտ հոգւոյ մ'ընկերացեալ մարմինն ալ իր առողջութիւնը պահելու մեծ գիւրութիւններ կը գտնէ իւր հիւրին այդ տրամադրութեանց մէջ : ի վերջոյ՝ առողջ հոգի մը կ'ենթադրէ և լուսամիտ՝ հրահանգեալ հոգի մը՝ որ դիւրաւ կարող է իրաց հետեւանքները կանխատեսել, և բազում հիւան-

դութեանց ու մահերու մէջ ո՛չ ապաքէն աննախատես ու անզգոյշ տգիտութիւնն է չարեացապարտ :

Ապա չբաւականանք ըսելով «Առողջ միտք յառողջ մարմնի» և մեր ուշադրութիւնն միայն մարմնոյն վրայ կեդրոնացնելով, այլ ըսեմք միանգամայն և մանաւանդ «Առողջ մարմին առողջ հոգւով», և փոյթ ունենամք գերծ մնալու բարոյական ախտաւորութենէ, մանաւանդ տակաւ առաւել առոյգ և զօրեղ գործելու զմեր հոգին :

Կ. ՔԵԱՆՆԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Էնկիւրիի կեդրոնական նախնական դատարանին ընդհանուր դատախազի օգնական անուանեցաւ Մուսթաֆա Ֆէվրի Էֆէնտի, նախագահ պատժական ատենին Եղզլատի : — Քարրերդի Քէպան Մատէն գաւառակին գայմագամ անուանեցաւ Ահմէտ Նէճիպ Էֆէնտի, գայմագամ Գըզըլ Քիլիսի : Նոյն նահանգին Գըզըլ Քիլիսէ գաւառակին գայմագամ անուանեցաւ Սաատի Էֆ, գայմագամ Զաֆա-ժագի, և նմա յաջորդեց Սապրի Էֆ, գայմագամ Քէպան Մատէնի :

— Նախարարաց խորհուրդը կը շարունակէ զբաղիլ Յունաց Պատրիարքարանի առանձնաշնորհմանց խնդրով :

— Վեհ. Սուլթանն հաւանած է տալ Սամսոնէն ի Սեբաստիա երկաթուղի մը շինելու համար Պ. Գոթարի խնդրած մենաշնորհն :

— Երկուշարթի օր հանդիսաւորապէս տեղի ունեցաւ Սիրքէճիի նորաչէն կայարանին բացումը :

— Միւրիւլվէր կ'իմանայ թէ Բալուցի Հիւսէյին պէյ, որ տեղւոյն նախկին հարցաքննիչ գաւառաւոր Քէչիլեան Յովհաննէս Էֆէնտիի սպանման պատճառաւ ամբաստանուած էր, Քարրերդի պատժական ատենին առջեւ դատուելով, անպարտ արձակուած է՝ ամբաստանութիւնք ապացուցուած չը լինելով : Հիւսէյին պէյի փոխանորդութիւնը վարած է փաստարան Եազըճեան Յովհաննէս Էֆ :

— Պետական Խորհուրդը կ'զբաղի Պէրու-թէն ի Դամասկոս շինուելիք Թրամվէյի գծին մենաշնորհի խնդրով : Խնդրարկուն է Հասան Պիհուսն Էֆ :

— Զրհանկիր զօրաց հրամանատար Զէյնեթի փաշա առաջարկած է որ հրդեհներն անմիջապէս իմաց տրուելու համար իւրաքանչիւր պահականոցի և Զրհանկիր զօրաց կեդրոններու միջեւ հեռագրական թեւեր հաստատուին, Զրհանկիր զօրաց թիւն աւելնայ, հրդեհներն իմաց տալու համար նոր միջոցներու դիմուին, և գաւառաց մէջ ևս Զրհանկիր զօրաց վաշտերը կանոնաւորելու համար Կ. Պոլսէն սպայներ զրկուին :

— Տանկն երեւան ելած է ի Սեւանիկ և ի Քարրերդ :

— Իգմիլէն կը գրեն թէ Միջերկրականի անգլիական նաւատորմի մէկ մասն, հրամանատարութեամբ դեր-ժովակալ Լորտ Ուոլթթըր Քէրի, յիշեալ նաւահանգիստն եկեր է :

— Սեւանիկի նահանգին մէջ գտնուող Բրաուշայի լճին և Տրամայի շրջակայ ճահիճներուն ցամաքեցուցման համար 30 տարւոյ արտօնութիւն տրուած է Զէհրապետէ Ահմէտ պէյի :

— Եանողլու Հասան անուն աւագանի որ Նիկովիդիոյ մէջ ասպատակութիւններ ըրած

և փախած էր, Պրոսպայի մէջ ձերբակալուեալ էր :
— Եւրոպայէ բերուած բժշկական դեղերն այսուհետեւ Ղալաթիոյ մաքսատունը պիտի հանուին :

— Վեհ. Սուլթանն հրամայած է որ երբ որ և է անձ իւր ունեցած իմթիաղ Պատուա-նշանի ոսկի չքաղարարմը կորսնցնելով նորէն ուրիշ մը ուղէ, կառավարութեան կողմէ ծախքն հոգացուելով նոր մը տրուի : Նոյնպէս ուղարկութիւն ընել որ ոչ ոք իւր պաշտօնապէս չունեցած պատուանշանը կամ չքաղարարմը չգործածէ :

— Փուրնալ Տը Ս. Բեդրապուրէ, խօսելով Յունաց Պատրիարքարանի խնդրոյն վրայ, կը յայտարարէ որ եթէ նոյն Պատրիարքարա-նի խնդիրներն օրինաւոր իսկ լինին, որ և է պատճառ չկայ արգիլելու եկեղեցեաց մէջ կը-րօնական արարողութեանց կատարումը :

Լ. Հէրբէ՛՛ Փուրնալ Տը Ս. Բեդրապուրէ/ի այս յայտարարութիւնն իրրեւ ապացոյց մը կը համարի թէ յոյն եկեղեցեաց մէջ կրօնական արարողութեանց արգիլման խնդիրը հաւա-նութիւն չէ գտած Օրթոտոքս շրջանակաց մէջ :

— Ձեռնհաս իշխանութիւնն որոշած է յետ այսորիկ բոլորովին քարուկիր չլինել այն խա-նութներն, ուր դիւրաւառ նիւթեր կը պահ-ուին և կրակի միջոցաւ արհեստը ի գործ կը դրուին. իսկ այդ կարգի այն փայտաշէն խա-նութներն որք արդէն չլինուած են, այնպէս թողուլ :

— Եւրոպական նախարարութեան պաշտօնա-տան մէջ գտնուած բոլոր դիւանատունը (էվ-րազ Գալէմի) միացուելով ընդհ. դիւանատուն մը կազմուած է, որ կը բաղկանայ երեսուն երկու քարտուղարներէ : Այս դիւանատուն ամէն օր առանց յապաղման կը կատարէ ըն-թացիկ գործերն ի դիւրութիւն գործի տէ-րերու :

— Կայս. Իրատէ մը հրամայած է որ պարս-կական սահմանադրւոյն վրայ գտնուած այն գաւառակաց մէջ, ուր տակաւին հեռագրա-կան թելեր չկան, անմիջապէս հաստատուին :

— Միախտուի բանտարկեալ մաքսախոյսե-րու տրուած օրական 5 զրուշը չը պիտի տըր-ուի այսուհետեւ, այլ ուրիշ բանտարկեալնե-րու տրուածին նման օրական երկու հոց :

— Ի հաշիւ կայս. կառավարութեան մինչև ցարդ բերուած մալվէրեան հրացաններու թիւն 200 հազարն անցած է :

— Կովկասէ գաղթող 9000 չէրքէսներու առաջին մասը՝ 2400 հոգի՝ ռուսական շոգե-նաւով մը մայրաքաղաքս Ժամանելով, իրենց ձամբան շարունակեցին դէպ ի Ատալիա :

— Հալէպի մէջ հետախույզ գրեթէ անհե-տացած է այլ ևս, և նահանգին շրջակայքը միայն մասնական դէպքեր կը պատահին :

— Ի նպաստ Համազգային Անկեղանոցի Վեհ. Սուլթանին շնորհած ծանրադին գոյքերը վա-ճառելու համար՝ որոշուած է տոմսակը 5 զրուշով վիճակահանութիւն մը կազմակերպել ի Բերա :

— Հրեայ հասարակութեան երեւելիք ո-մանք էյուպի մէջ նուիրական անձի մը դամ-բարանին դէմ գտնուած ծովեղերեայ ապա-րանք մը դնած էին, նոյն հասարակութեան յատուկ հիւանդանոցի մը վերածելու համար : Ըստ տեղեկութեանց Սապակի, Վեհ. Սուլ-թանն իմանալով զայս և յարմար չգտաւելով որ նուիրական անձի մը դամբարանին մօտ գտնուած տուն մը հիւանդանոցի վերածուի, հրամայած է որ անմիջապէս այդ տունը պար-պուրի : Այդ տուն այժմ յատկացուած է Տա-

րիւլֆէյզը Համիտիյէ վարժարանին, որ կը գտնուի ընդ հովանաւորութեամբ Վեհ. Սուլ-թանին :

— Գեղարուեստից վարժարանի աշակեր-տաց կողմէ շինուած պատկերներն, արձաննե-րն և այլ ձեռագործներն ի տես հասարա-կութեան դրուած ըլլալով, չարաթ օրը կայս. թիկնապահ Ֆէրիզ Ահմէտ Ալի փաշայի նա-խագահութեամբ կազմեալ քննիչ ժողով մը իւրաքանչիւր ձեռագործն առանձին քննե-լով, վարժարութիւնները որոշեց :

Աւասիկ այս տարի մրցանակ ստացող Հայ աշակերտաց անունները :

Իւղաներկի բարձրագոյն դաս. — Երուանդ էֆ. Բ. կարգի Ա. մրցանակ : Աղաթօն էֆ. Բ. կարգի Ա. մրցանակ : Նշան և Ոսկան էֆէն-տիք պատուոյ յիշատակութիւն :

Իւղաներկի Ա. արգի. — Թովմաս էֆ. Ա. կարգի Ա. մրցանակ :

Մաշիսով շինուած ցկարներու Բ. արգի. — Մարտիրոս էֆ. Ա. աստիճանի մրցանակ եւ Սարգիս Ուզունեան էֆ. Բ. աստիճանի Բ. մրցանակ :

Մաշիսով շինուած ցկարներու Ա. արգի. — Արամ էֆ. Բ. աստիճանի մրցանակ :

Նախապատրաստական դաս. — Վրթանէս էֆ. Բ. աստիճանի մրցանակ :

Ճարտարապետ Գ. արգի. — Անտոն և Արամ էֆէնտիք Ա. աստիճանի մրցանակ : Յակոբ էֆ. Բ. աստիճանի մրցանակ :

Բ. արգի. — Կարապետ էֆ. Ա. աստիճա-նի մրցանակ եւ Արտաշէս էֆ. Բ. աստիճա-նի մրցանակ :

Ա. արգի. Յարութիւն և Արամ էֆէնտիք՝ Ա. աստիճանի մրցանակ : Յակոբ և Աւետիս էֆէնտիք՝ Բ. աստիճանի մրցանակ :

— Ատարազարէն Լէֆքէ տանող երկաթուղ-ւոյ գիծը դեկտեմբերի սկիզբը բանիլ պիտի սկսի : Այս գծի երկայնութիւնն է 63 քիլո-մետր :

— Թրիպոլիէն կը դրեն մեզ թէ, անցեալ չորեքշաբթի գիշեր երկրաշարժի բաւական զօրաւոր ցնցումներ տեղի ունեցեր են անդ. որ և է վնաս չ'կայ, թէ և շատեր՝ զարթնելով՝ տուներէ դուրս փախեր են :

— Ոստիկանութեան Վսեմ. նախարարին հրամանաւ, Օսմ. կայսրութեան որ և է մէկ կողմը-անգլի-ուսնեցած որ և է ոճրագործու-թիւն գաւառաց ընդհ. դատախազներու կող-ման անմիջապէս պիտի տեղեկագրուի Ոստի-կանութեան նախարարութեան, ուր ամէն դէպք մասնաւոր սուլմարի մը մէջ պիտի ար-ձանագրուին : Այս կերպով կարելի պիտի լի-նի երկրին մէջ պատահած ոճրագործութեանց վիճակացոյցն ունենալ ամէն տարի :

— Պէյքօղ կառուցուելիք թղթի գործա-տան շինութիւնն փութով յառաջ կը տա-րուի : Մեքենայք, 150 հազար ոսկւոյ արժե-քով, արդէն իսկ ապսպրուած են :

«ՄԱՂԻԿ» ԹՂԹԱԿՅՈՒԹԻՒՆՔ

Պաքում. Մ. Մեր ցաւակցութիւնը կը յայտնեմք : Արապկիւր. Մ. Այնպէս թող լինի, Անուշը ճշդե-ցինք. իւր անձին կը վերաբերի :

Պէշիկթաշ. Ֆեհլէօն. Հրատարակութեան համար զրկուած գրութիւնը ստորագրուելու են՝ գեթ ի գի-տութիւն խմբագրութեանս : Հաճեցէք Ձեր ո'վ լինել յայտնել :

Թրիպոլի. Գ. — Այդ անունը մեզ արդէն ծանօթ լինելով, մեր կողմանէ զրկեցինք. ազատ է ընդունել կամ մերժել : Մեր ժման պարագային մէջ՝ իրմէն կը խնդրուի վերադարձնել : Ձեր պատմած դէպքն ո'ր գիւղերու բնակաց պատահած է. անունները չէք նշա-նակած :

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՑ ԵՐԴՄՆԵՑՈՒՄԸ

Տպագրական Տեսչութեան կողմէ երէկի թուրք լրագրաց մէջ հրատարակուած է օրինական հետեւեալ արամագրութիւնն, որ կը վերաբերի եկեղեցականաց և բարոններու երգմնեցուման և որ վաւերացեալ է կայս. Իրատէով :

« Եթէ Հուգուգի ու Պատժական դատա-րաններու և հարցաքննիչ դատաւորաց առջև եկեղեցականաց ու բարոններու (խախտմ) երգմնեցումն հարկ դատուի, իրենց ծէսին համեմատ երգում ընելու համար կը զրկուին իրենց վերաբերեալ Պատրիարքարանին, Մետ-րապոլտարանին, Առաջնորդարանին և Բարոն-նարանին, որք Թէգքէրէով մը կը ծանուցա-նեն եկեղեցականաց կամ բարոններու եր-դում ըրած ըլլալը կամ չըլլալը : »

26 Սէֆէր 1308

29 Սեպտեմբեր 1306

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Լէվանթ Հէրալէ տանելով թուրք լրագիրք ծանուցին թէ, Ղալաթիոյ խորհրդարանին մէջ անցեալ ուրբաթ օր գումարելի Ազգ. Ժո-ղովոյ նիստը յետաձգուեալ է :

— Սերաստիոյ Բաղ. Ժողովը կը հերքէ Փա-րիզի Թան լրագրոյն հրատարակած այն լուրը թէ, չորս ծառեալ անձինք Առաջնորդ Սրբա-զանին սենեակը մտնելով, իրր թէ վիրաւո-րած լինին զնորին Գերապատուութիւնն :

— Եկեղեցական Համագումար Ժողովոյ կող-մէ կազմեալ յանձնաժողովն չորեքշաբթի օր գումարուելով, խորհրդակցութիւններ կատա-րեց առանձնաշնորհմանց խնդրոյն առթիւ Բ. Դրան կողմէ եկած պաշտօնագրոյն վրայ :

Յանձնաժողովն յառաջիկայ չորեքշաբթի ևս պիտի գումարի :

— Մեր ստացած տեղեկութիւններէրց յառնուած է, որ սեպտ. 30 ին Մեռօնօրհնու-թեան հանդիսին ներկայ են եղել հազարաւոր Հայեր օտար երկիրներէրց, մինչև անգամ Եփփայից, Հնդկաստանից էլ եկողներ կան :

Ուրեմն միմեանցից ամէն կերպ բաժնուած, անջատուած, օտարացած Հայեր մինչև օրս էլ իրենց կրծքումը կրում են այն հաւատը, որ քարոզէլ է վարդապետել ի Հայաստան-եայց եկեղեցու պետը՝ Լուսաւորչը, և գա-լիս են էջմիածին և այդտեղ Մայր Աթոռի ա-ռաջ ծուր դնելով միանում են միմեանց հետ իրրեւ եղբայրներ :

Նոր-Դար

Յ. Թ. ՀԻՆԴԻԵԱՆ. Հիմնական նոր կալանակ Քրտաների շարադրութեամբ : Ա. տարի. բա-րեւիտեալ և յոյժ ճոխացեալ. կը բաժնուի երկու մասանց : Ա. մասը նուիրուած է ֆրան-սերէնէ ի հայ թարգմանութեան, Բ. մասը՝ Հայերէնէ ի ֆրանսերէն թարգմանութեան : Գին 6 զրուշ :

Ա Ր Ժ Լ Բ Դ Ր Ա Մ Ո Ց

Օսմ. լիւան 100 զրշ. էն

Մեքիսիյէ	407 30	Արժաթ մանէթ	87
Մեթալիք	400 40	Բուսիոյ բօլ	91 43
Պէշիք, Ալլըլըք	402 30	Նարոյէտն	87
Քառորդ մէքիս	406 30	Գրեմիք	51 40
Մանր մէքիս	401 30	Անգլ. լիւան	409 33

Մանէթ թղթադրամ 7 61

Գոնալիտէ (Երեկոյ)	20	Բուս. Երկ. բաժին	79 3/8
Նոր փոխ. 4 լի	0	Թղթադրամ (Թաւս.)	43
(Թաւսիլիւթը Օսմ.)	79 36	Ներքին ֆոխաւ.	60

ԱՐՏՕՆԱՏԻՐ Ա. ՍԱՔԱԵԱՆ

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Եսկի գապիլիէ հասցէսի, քիւ 61